

Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

629.13
Ա - 25

ԱՐԱՄ ՍԱՐԳՍՅԱՆ

ՈԴԵՑԻՆ ՆԵՎԱՏՈՐՄԵ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ



22 35

17 SEP 2013

14 566

24 SEP 2010

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԻՈՐԴՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացեք.

*629.13
U-25*

Ա.Բ.Մ ՍԱՐԳՍՅԱՆ

ՈԴԱՅԻՆ ՆԱՎԱՏՈՐՄԸ

ՅԵՎ ՆՐԱ

ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

100
12698



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՎԵԼ 6—1925.

ԽՆՉ Ե ՈԴԱՅԻՆ ՆԱՎԱՏՈՐՄԸ

Ժամանակից ոդային նավատորմը բաժանված է յերկու տեսակի՝ ա) ռազմական և բ) քաղաքացիական։

Ռազմական ասպարիզում ոդային նավատորմ կոչվում են այն զորամասերը, զորոնք ռազմական նպատակների համար ոգտագործում են այերուպաններ և ղեկավարվող ոդապարիկներ (դիրիժարլներ)։

Քաղաքացիական ոդային նավատորմը կոչված է զանազան կույլուրական նպատակների ծառայելու և ոգտագործում ենույն պլինցիպով կառուցված ոդանավեր։

Ոդային նավատորմը գիտության ու տեխնիկայի կատարելագործության մեջ բանում և առաջնակարգ և աշքի լնկնող տեղ։ Թե ռազմական և թե փոխադրության զործում ոդանավը հսկայական հեղաշրջում է առաջ բերել, և այսոր, մի քանի տարվակյանք ունեցող ոդանավն իր վրա յե հառել ամբողջ աշխարհի առաջավոր մասի ուշադրությունը։

Ոդանավի գերն առանձնապես խոշոր և ռազմական ասպարիզում։ այնտեղ նա հսկայական նվաճումն կատարել և ռազմական տեխնիկայի մեջ զբավել և առաջնակարգ տեղ։

Զարգացման արդի լնմացքով առաջ գնալու գեղքում ոդային նավատորմն անշուշտ ապագա պատերազմների ժամանակ մինչ այժմ՝ գոյություն ունեցող ռազմական տեխնիկայի և պատերազմի ձեռքի մեջ հիմնական փոփոխություններ կմտցնի։ Նա կպատերազմի վոչ միայն թշնամի բանակների, այլև թշնամի յերկրների խաղաղ ազգաբնակության հետ։ Ճակատները ճեղքելով՝ նա կումբակոծի քաղաքներն ու գյուղերը և կահարեկի բնակիչներին։ Այսպիսով ռազմաբեմը ֆրոնտից կտեղափոխի յերկրի վողջ տերիտորիայի վրա։

Ողային նավատորմի այս հատկություններն արդեն հաստատում են նրա անհրաժեշտությունը։ Նրա զարգացման ուժեղ ու արագթափը ապացուցում է, վոր ապագա պատերազմներում առանց ուժեղ ու զարգացած ողային նավատորմի վոչ միայն չի կարելի հաղթանակ տանել, այլև անհնար կդառնա պատերազմին մասնակցել։

Ողային նավատորմը, վոր կույլտուրական խոշոր նշանակություն է ունենալու, գեռես գտնվում է իր զարգացման առաջին աստիճանի վրա։ Այս ասպարիզում նա հսկայական անելքներ ունի։ Մեր կույլտուրայի բարգավաճման ասպարիզում նրա դերը նշանակած է արդեն, իսկ այժմ նա կարիք ունի տեխնիկական կատարելագործման ու զարգացման։

Վերջին մի քանի տարվա փորձնական ոգտագործումն ապացուցեց, վոր ողային նավատորմը՝

1) Փոխադրական միջոցներից ամենից արագ, դյուրին, եժան և ապահով է։

2) Գյուղատնտեսության լավագույն բարեկամը։ Նա հաջողությամբ կովում է վնասատուների գեմ, գուշակում է գալիք յեղանակը, գյուղը կապում է արտաքին աշխարհի հետ, աջակցում է հողաբաժնության ու ցանքերի հաշվեառության աշխատանքների արագացմանը և այլն և այլն։

3) Անտառային տնտեսության պահպանման գործում կատարում է անփոխարինելի գեր, աջակցում է հրդեհների հայտնաբերման և հանգեցնելուն, հաշվում է ծառերի քանակը և պարզում վորակը, լեռնային անմատչելի մասերում ցանում է ծառերի սերմեր, անտառը պահպանում է գողությունից և այլն և այլն։

4) Զինորսության ասպարիզում ևս նա ոգտակար աշխատարում—գտնելով ձկների ծվարները։

Այս բոլորը նորից ապացուցում են այն, վոր մարդկության կյանքում ողային նավատորմը հանդիսանում է կույլտուրական մի անհրաժեշտություն։

Ողային նավատորմի նշանակությունը բնորոշվում է նաև բարգավական տեսակետից։ Կապիտալիստական կարգերում նա

համարված է տիրող դասակարգերի շահերի պաշտպանության լավագույն միջոցներից մեկը, մանավանդ այժմ, յերբ այդ յերկներն ապրում են միջազգային հուզումների շրջան, մինչդեռ ողային նավատորմը բանվրագյուղացիական իշխանության համար ավելի խոշոր ու կարևոր նշանակություն ունի գալիք դասակարգային պայքարի համար։

Ահա այս գրության թելադրանքով է, վոր ողային նավատորմը մարդկության ուշքն իր վրա յե կենտրոնացրել։

Զուգընթաց իր ներկա զարգացման՝ ողանավը դուրս գալով մասնագետների նեղ շրջանից, այսոր դառնում է ընդհանուր հետաքրքրության առարկա և մասսաների մատչելի ոգտագործման միջոց։

Ո Դ Ա Յ Ի Ն Ն Ա Վ Ա Տ Ո Ր Մ Ի ԾԱԳՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԴԱՅՑՈՒՄՆ

Ողային նավատորմի ծագման ու նրա զարգացման ընթացքը կարելի յե բաժանել յերեք շրջանի։ 1) Նախապատմական և ապա ողային տարածությունը հաղթահարելու ձգտումների շրջան, վորը շարունակել է ամենահին ժամանակներից մինչև միջին դարերը, 2) Այդ ասպարիզում մարդու տարած առաջին հաջողությունների շրջան, վոր տեսել է մինչև իմպերալիստական պատերազմի սկիզբը (1914 թ.) և 3) Ողային նավատորմի բարգավաճման շրջան (1914 թ. մինչև մեր որերը)։

Մեզ հասած մի շարք պատմություններից, լեզենդներից և իրերից յերեսում ե, վոր ողը հաղթահարելու ձգտումներ և արել նույնիսկ նախապատմական մարդը և այդ այն շրջանում, յերբ նա դեռ նոր եր ազատվում վայրենի վիճակից ու իր կույլտուրական կյանքի հիմքն եր դնում։

Հին մարդն յերբ հաղթեց ցամաքային և ծովային տարածությունները՝ ստեղծելով յերթեւկության և փոխադրության միջոցներ, նրա մասհողության ու կենտրոնական ուշադրության առարկան դարձավ ողային հաղորդակցություն ստեղծելը։

Նա նախանձով եր նայում ճախրող թռչուններին:

Ողային հաղորդակցություն ստեղծելը նրա ուժից վեր և յեղել և միշտ ել նրա համար այդ խնդիրը ցնորք և յերազ ե մնացել: Այդպիսով ողը նրա յերեակայության մեջ պատկերացել ե գաղտնիքներով—աստղերով, արևով ու լուսնով լի մի տարածություն, վորոնց նա հետագայում միայն աստվածացրել ե:

Ահա թե ինչու թռչունների որինակով նա միշտ իր աստվածներին թեավոր ե պատկերացրել: Այդ փաստն ամենից լավ հաստատում ե քրիստոնեյական կրօնը, ըստ վորի բոլոր հրեշտակները և սրբերը թեավոր են պատկերացված:

Վորովինետև հին մարդը յերկար ժամանակ իր կատարած փորձերով չկարողացավ հաջողություն ունենալ ողը նվաճելու գործում, այդ պատճառով նա այդ ընդունակությունը վերապրեց իրենից ավելի բարձր ու կարող եյականներին—«հերոսներին» ու «աստվածներին»:

Նա միշտ սավաննելու փորձեր արեց, որինակ վերցնելով թռչունից, բայց նրա փորձերը դրական արդյունք չավին, միայն միջին դարերում, յերբ գիտությունը զարգանալ սկսեց, նա կարողացավ վորոշ չափով լուսաբանել այդ խնդիրը:

Ահա արդ ժամանակից ե, վոր սկսվում ե՝ ողագնացության պատմության յերկրորդ շրջանը, յերբ մարդը գիտության շնորհով հաջողություն ձեռք բերեց:

Դեռևս 16-րդ դարի սկզբներում (վերածնության շրջանում) իտալական հայտնի գիտնական և գեղարվեստագետ Լեռնարդո-դա-Վինչին աշխատեց այդ հարցի լուծումը տալ և իրագործել ողագնացության գաղափարը, բայց նրան արդ չհաջողվեց, վորովինետև ժամանակակից տեխնիկան գտնվում եր իր զարգացման նախնական շրջանում և դեռևս անկար եր ստեղծել թռչող մեքենաներ:

Լեռնարդո-դա-Վինչիի ձեռագրերի մեջ գտնված այերոպլանի հելիկապտերի¹⁾ և պարաշյուտի²⁾ նախագծերից յերեւմ

¹⁾ Թռչող մեքենա, վոր նաման և այերոպլանին, բայց գործում ե մեկ մեկու վրա գասավորած պրոպելերներով, վորոնք դառնում են զանազան կողմեր և այսպիսով ուղղություն տալիս մեքենային—հելիկապտերին:


ե, վոր նա թռչելու խնդիրն սկզբունքորեն լուծել ե ճիշտ կերպով:

Վերջնականապես և գործնականորեն մարդուն հաջողվել ե ողագնացությունն իրագործել 1783 թ. Մոնգոլֆիեր յերկու յեղբայրների ձեռքով:

Մի քանի անհաջող փորձերից հետո, վոր չհուսահատեցրեց Մոնգոլֆիեր յեղբայրներին, նրանք 1783 թ. հունիսի 5-ին Ֆրանսիայի Աննոնե քաղաքում հասարակության ներկայությամբ կատարեցին իրենց առաջին հաջող փորձը: Նրանց պատրաստած ողապարիկն այդ ողը բարձրացավ 2,000 մետր (մոտ 2 վերստ): Այդ ողապարիկի շրջագիծը հավասար եր 36 մետրի, իսկ քաշը՝ մոտ 12^{1/2} ֆետի:

Այս հաջող փորձի լուրն արագորեն տարածվեց աշխարհում: Մոնգոլֆիերներն շտապ կերպով հրավիրվեցին Պարիզ իրենց փորձը կրկնելու կառավարության ներկայացուցիչների և ժողովրդի առաջ: Նրանց յերկրորդ փորձն ևս հաջող անցավ:

Այս հաջողություններից խրախուսված Մոնգոլֆիեր յեղբայրները վճռեցին կա-



Մոնգոլֆիեր յեղբ. ողապարիկի առաջին թոփքը Պարիզում

²⁾ Հովանոցածե գործիք, վորն ողից ընկնելու արագությունը մեղմացնում է: Ժամանակակից ողագնացության մեջ պարաշյուտը կատարում է ճիշտ նույն գերը, ինչ փրկարար շրջանակ (спасательный круг) ծովագնացության մեջ, նավերի խորտակման ժամանակ:

ոռւցել մի նոր, ավելի ուժեղ ողապարիկ, վորով մարդն ել կարողանար բարձրանալ: Վորովինետև նրանք գլուխին, վոր վերին շերտում ողն ավելի նոսր ե, ապա ուրեմն վնասակար մարդու համար, այդ յերկը ողապարիկով փորձի համար բարձրացրին մեկ փոշխար, մեկ աքաղաղ և մեկ բաղ: Ողապարիկն իջավ քաղաքից մոտ 15 վերստ հեռավորության վրա: Յերբ նրանք գտան ողապարիկը, տեսան, վոր վեր բարձրացած կենդանիները բոլորն ել մնացել են անվնաս: Այս փորձից հետո միայն մարդիկ վստահացան բարձրանալ:

Այսպիսով դրվեց ողագնացության հիմքը:

Մոնզոլֆիեր յեղբայրները ունեցան բազմաթիվ հետևողներ, վորոնք տասնյակ տարիների ընթացքում աշխատելով կարողացան ողապարիկը կատարելագործել այնքան, վոր կարելի լինի այն ղեկավարել: Մինչ այդ մարդը չեր կարողանում ուղում ղեկավարել ողապարիկը, այլ նա ընթանում եր քամիների ուղղությամբ:

Առաջին տիպի ողապարիկների աստիճանական զարգացումն արդի մարդուն տվեց ավելի կատարելագործված ողապարիկների, հանձինս ժամանակակից հսկա դիրքաբարների:

Բայց հետագայում մարդն յեկավ այն յեղբակացության, վոր ողապարիկը այն կատարելագործված միջոցը չե, վորով մարդը պետք ե կարողանար վերջնականապես հաղթել ողային տարածությանը:

Յերբ մարդը համեմատում եր ողապարիկի թոփչը թըռչունների ճախրելու հետ և գտնում եր, վոր վերջինները թըռչում են ավելի հաստատ ու համարձակ:

Այս շրջանում մի շարք դիտնականներ սկսում են հետազոտել և ուսումնասիրել թոչունների ճախրելու սկզբունքներն ու գաղափարը:

Այս ասպարիգում ամենահաջող յելքի յե հանգում գերմանացի ճախրապետ Ռոտու Լիլիենթալը, վորին հաջողություն է 1890 թ., մի քանի տարվա աշխատանքներից հետո, դրական արդյունքի համանել:

Ճախրապետ Ռոտու Լիլիենթալը թոչունների թոփչքներն

ուսումնասիրելուց հետո կառուցում ե մի մեքենա, վորն ուներ մոտավորապես թոչունի ձև:

Դա սավառնակն եր (ուղարկ):


Ոտտո Լիլիենթալը մի քանի տարվա ընթացքում իր սավառնակով կատարեց մոտ յերկու հազար փորձնական թոփչը, վորոնցից մեկի ժամանակ վայր ընկավ ու մեռավ:

Նրա նվաճումները մեծ զարմանք պատճառեցին ամբողջ աշխարհին: Լիլիենթալի հետևողների թիվը բազմացավ, վորոնք զանազան փոփոխությունների և կատարելագործման յենթարկեցին սավառնակը:



Ոտտո Լիլիենթալը փորձնական թոփչքի ժամանակ

Նրա հետևողներից ամենից աչքի ընկնողները դարձան այերիկացի արհեստավոր Ռովիլ և Վիլբուրգ Ռայտ յեղբայրները, վորոնք իրենց հեծանիվի արհեստանոցում շինեցին մի փոքրիկ շարժիչ (մատոր) և իրեն պրոպելլերով (փոռան) ամրացրին շինված սալառնակին ու այսպիսով դրվեց առաջին իսկական այերոպելանի հիմքը, վորն այսոր համարձակ ճեղքում ե ողն ու գարձել ե մարդկության ուսումնական կույլատրական ուժեղ գենքերից մեկը:




Ոտառ Լիլիենթալը իր սավառնակով (ոլահեր)
փորձնական թռիչք և կատարում

Մի քանի ան-
հաջող փորձե-
րից հետո Ռայտ
յեղբայրների
այերոպլանը
1903 թ. կա-
տարեց առա-
ջին հաջող թռ-
իչքը:

Ռայտ յեղբ-
այրներից հե-
տո ողանավի
շ կառուցման
գործը արագ
թափով տարա-

ծվեց և նըանց ժա-
մանակակիցներից
կարելի յե հիշել ֆը-
րանսիացի նշանա-
փոր ողաչու Բլերիո-
յին, փորը բարելա-
վեց այերոպլանի
կառուցման արվես-
տը: Նա մի շարք բա-
րեփոխումներ մըտ-
ցնելով այերոպլանի
տեխնիկայի մեջ, նը-
րան դարձրեց մար-
դու կամքին միան-
գամայն հնագանդ:
Բլերիո ողաչուն էր,
փոր առաջին անգամ



Ռայտ յեղբայրների այերոպլանը
այերոպլանի միջոցով կապ ստեղծեց յերկու քաղաքների միջև
Նրա բազմաթիվ թռիչքներից ամենահաջողը պիտի համարեն:

Լամանշ նեղուցի վրայով կատարած թռիչքը, վորով նա առաջին
անգամ ողային գծով միացրեց Ֆրանսիայի և Անգլիայի ափերը:

Հետագայում ավիացիայի զարգացումն առաջ ե ընթանում
արագ թափով: Առաջ են գալիս մի շարք նոր կոնստրուկտորներ,
վորոնք կրկին նորանոր բարեփոխություններ մտցրին ողանա-
վի տեխնիկայի մեջ:

Առանձնապես 1906—14 թ. թ. շրջանում բազմաթիվ հա-
սարակական թռիչքներով նոր կոնստրուկտորներն ավիացիայի
գաղափարը դարձրին մասսայական:

Իմպերիալիստական պատերազմի ժամանակ ողազնացու-
թյունը մտավ իր յերրորդ, ավելի կատարելազործված շրջանը:
Այդ ժամանակավելի շեշտակի դարձավ նրա նշանակությունն ու-
գերը—կարճ ժամանակում նա դարձավ ուազմական գործում
ամենառաջեղ ու պիտանի զենքերից մեկը:

Պատերազմի պայմաններն եին, վոր 3—4 տարվա ընթաց-
քում, այնքան զարգացրին ողային նավատորմը, վոր դուրս
գալով մանկական հասակից, նա դարձավ մարդկության ուազմա-
կան և կույլտուրական հզոր զենքերից մեկը:

Պատերազմի միջոցին ձեռք բերած նվաճումներից հետո,
ողանակն ասպարեզ ե գալիս կյանքի խաղաղ պայմաններում,
իբրև կույլտուրական մի զորեղ զենք և հայտնաբերում ե մի
շարք ուրիշ խոշոր հատկություններ ևս:

Ո ԴԱՅԻՆ Ն ԱՎԱՏՈՐՄԸ Ի ԲՐԵԿ ՌԱԶՄԱԿԱՆ ԶԵՆՔ

Կապիտալիստական կարգում գիտությունն ու տեխնիկան ևս
վաճառվում են: Բուրժուազիան գնում ե բոլոր այն գյուտերն
ու մեքենաները, վորոնք պատերազմական և խաղաղ պայմաննե-
րում վորեւ կերպ կարող են փոխարինել նարդուն:

Անհրաժեշտ ենք համարում ընդգծել նաև այն փաստը, վոր
բուրժուազիան, հատկապես պատերազմի շրջանում, աշխատում
ե ձեռք բերել ուազմական նշանակությունն ունեցող նորանոր

միջոցներ, վորպեսզի այդպիսով կարողանա ուժեղացնել իր շարքերը, իշխել բանվոր և գյուղացի մասսաների վրա, վորոնց դեկը նա իր ձեռքում ուժով ե պահում: Նույն վիճակին արժանացավ նաև ողային նավատորմը:

Չնայած վոր ողային նավատորմը կոչված ե կույլտուրական աշխատանքի, բայց պատերազմի ծարավ իմպերիալիզմն առաջին իսկ քայլից ծառայեցրեց այն ռամազական նպատակների և մինչև այժմ ել կատարելագործում ե այն այդ ուղղությամբ:

Ռազմական պետքերի համար ողային նավատորմով (ողապարիկներով) ոգտվելու փորձեր են արել ավտորիացիները դեռ ևս 1894 թվից. նույնանման փորձեր տեղի յեն ունեցել և փրանս-պրուսական պատերազմի ժամանակ (1870—71 թ.), ավելի հաջող հետևանքներով: Այդ ժամանակ եր, վոր պատերազմի համար առաջին անգամ խոշոր դեր խաղաց ողային նավատորմը—պաշարված Պարիզից կառավարության ներկայացուցիչներին փոխադրեց կենտրոնից կտրված մյուս վայրերը, ուր նրանք առաջ բերեցին աղքային շարժում պրուսացիների դեմ և այդպիսով փրկեցին պաշարված Պարիզը:

1904—5 թ. թ. ոռու-յապոնական պատերազմի ժամանակ արդեն առաջին անգամ ասպարեզ յեկավ և այերոպանը, վորը դրական արդյունքներ չտվեց՝ տեխնիկապես թույլ լինելու պատճառով:

1911 թ. Տրիպոլյան և 1912 թ. Բալկանյան պատերազմների ընթացքում ևս հանդես յեկան այերոպանները, վորոնց գործողությունները նույնպես անհետևանք յեղան՝ տեխնիկապես դեռևս անկար լինելու պատճառով, բայց նրանց հանդես գալն ապացուցեց, վոր ողային նավատորմի կատարելագործելու դեպքում կարելի յե ոգտագործել այն և լուրջ հետևանքների հասնել պատերազմի ժամանակ:

Վերը հիշած պատերազմների ժամանակ վորոշ չափով հաջողություն ունեցան գլխավորապես դիրիժաբլները և այդ պատճառով ել վերջիններս ավելի ուշադրության արժանացան ու նրանց զարգացման հատուկ ուշք դարձրին:

Ինչպես սկզբում հիշեցինք, այերոպանների զարգացման և ոգտագործման ըրջանն սկսվում է 1914 թ.:

Իմպերիալիստական պատերազմը հետևյալ պահանջներն առաջադրեց ողային նավատորմին՝

1. Հետախուզություն.

2. Ռմբակոծություն.

3. Հակառակորդի ողային ուժերի վոչնչացում:

Միաժամանակ նրա անելիքների մեջ մտավ նաև հրետանու ոմբակոծությանն ուղղություն տալու գործը, առաջապահ զորամասերն իրենց հրամանատարական կազմի և ընդհանուրապես պաշարված զորամասերի ու վայրերի հետ կապելը և այլն:


Իբրև հետախուզության միջոց պատերազմի ժամանակ ողային նավատորմը ուղամական բոլոր միջոցների մեջ բռնեց առաջնակարգ տեղ և խոշոր դեր խաղաց այդ ասպարիզում: Ոգտվելով վեր բարձրանալու (4—5,000 մետր) և արագ թռչելու (100—200 վերստ 1 ժամում) նավավորություններից, այերոպանը վերջին իմպերիալիստական պատերազմում բազմաթիվ կարևոր ու արժեքավոր ծառայություններ եր մատուցում—բերելով թշնամու բանակի զորքերի դասավորման, ուժերի և թիկունքում կատարվող աշխատանքների մասին արժեքավոր տեղեկություններ:

Ողային նավատորմը նման աշխատանքներ կատարում եր վոչ միայն ցամաքային ուժերի վերաբերմամբ, այլև ծովային: Այստեղ ողային նավատորմը հաջողությամբ գտնում եր ծովային ուղամական նավերի կենտրոնատեղերը և հաշվի առնում նրանց քանակն ու վորոշում վորակը: Մեծ հաջողությամբ նա հայտնաբերում եր ծովում լողացող սուզանավերն ու ականները, վորոնք խոշոր ուղամակավերի ամենավոխերիս թշնամիներն են:

Ավելորդ չենք համարում մեր վերև ասածները հաստատող մի քանի հետաքրքրական փաստեր տալ:

Իմպերիալիստական պատերազմի վերջին ըրջանում (1918 թ.) գերմանական ողային նավատորմը յուրաքանչյուր շարաթվա

վա ընթացքում 4,000 լուսանկար եր հանում, վորոնց շնորհիվ գերմանացիներին հաջողվել ե պատերազմի վերջին մի քանի ամսվա ընթացքում նկարել թշնամու յերկրի մոտ 24,000 քառ. կիլոմետր տարածություն։ Այդ լուսանկարներով հարավոր եր



Ուգանակից կատարած լուսանկար

լինում վորոշել նաև թշնամու բանակի դասավորումը և ուժերի համախմբումը, ըստ վորում և կազմվում ելին պատերազմի ընթացիկ գործողությունների ծրագրերը։

1917 թ. ընթացքում անգլիական ջրառանավերը (հիդրոպլան) հայտնաբերել են գերմանական 169 սուզանավ, ոմբակոծելով 106-ը, միայն 63-ին ե հաջողվել խուսափել։

Ի հաստատումն այերոպլանի նշանակության վորպես հետախուզական միջոցի, բերենք մի քանի թվեր նրա գարգացման և ուժեղացման մասին։

Մեր ուսեցած ստույգ տեղեկությունների համաձայն Գերմանիան կառուցել ե՝

1911 թ.	24	հատ	հետախուզույզ	այերոպլան
1912 »	136	»	»	»
1913 »	446	»	»	»
1914 »	1348	»	»	»
1915 »	3999	»	»	»
1916 »	5188	»	»	»
1917 »	13330	»	»	»
1918 »	7345 ¹⁾	»	»	»

Այսպիսով, ինչպես ցույց ե տալիս աղյուսակը, հետախուզույզ ողանակերի կառուցումը ավելացել ե արագ թափով և տարեց տարի շատացել ե հազարներով—այս հանգամանքն ինքնըստինքյան բնորոշում ե նրա խիստ կարևորությունը պատերազմի համար, իբրև հետախուզության լավագույն միջոց։ Ինչպես տեսնում ենք, ութ տարվա ընթացքում միայն Գերմանիայում կառուցվել են 31,816 հետախուզույզ այերոպլան։

Բացի այերոպլաններից հետախուզության համար ոգավում ելին նաև հատուկ ոգապարիկներից (քրիզոնայի աէրոստատ), վորթոկով կապված ելին լինում ավտոմօբիլներին, զրահապատներին և շրդենավերին, վարոնք ընթանում ելին իրենց հետ տանելով հետախուզույզ ողապարիկը, վորը հեռախոսի միջոցով հայտնում եր հետախուզության հետևանքները։ Նույն ուգանավերին, անհրաժեշտության դեպքում, կապված ելին լինում մի կետում և մոտ 2000 մետր բարձրությունից դիտում ելին և հետախուզության արդյունքները նույնպես հեռախոսի միջոցով հայտնում։

¹⁾ Այս թվին, պատերազմի դադարելու պատճառով, հետախուզույզ այերոպլանները շինվել են միայն մի քանի ամսվա ընթացքում։

Ողային նավատորմի հետախուզության ասպարիզում կատարած ոգտակար և անհրաժեշտ աշխատանքն ամենից լավ բնորոշել ե ինքը՝ բանակը, անվանելով նրան «բանակի աչք»:

Ռ Մ Բ Ա Կ Ո Ծ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ողային նավատորմի նշանակությունն, առանձնապես վերջին պատերազմի ընթացքում, ոմբակոծության գործում ևս հրակայական ե յեղել:

Այս ասպարիզում նա նվաճումներ արեց այն ժամանակ, յերբ տեխնիկապես կատարելագործվեց մինչ այն աստիճան, վոր կարողացավ լայնացնել իր թռիչքի տարածությունը և ավելի շատ ծանրություն բարձրացնել: Նախ քան ոմբակոծող հատուկ ողանավեր պատրաստելը, ոմբակոծություն կատարում ելին հետախույզ ողանավերը:

Արդեն 1915 թ. վերջերին ականատես յեղանք ոմբածիդ ողանավերի մի մեծ խմբի գործողություններին, վոր կատարեցին մի շարք խոշոր ոմբակոծություններ Գերմանիայում: Դաշնակիցներին՝ պատկանող այդ 62 այերոպաններից կազմված ոմբածիդ խումբն եր, վոր իր առաջին արշավանքը կատարեց Գերմանիայի Դելինգ քաղաքում գտնվող պայմանագիր նյութերի պահեստների և գործարանների վրա:

Ոմբածիդ նավատորմի առաջին գրական փորձերի հետեւ վանքն այն յեղավ, վոր նրա ուժեղացման վրա հատուկ ուշադրություն դարձվեց: Պատերազմի հետագա շրջանում սկսվեցին մի շարք խոշոր արշավանքներ, վորոնցից հայտնի յեն Պարիզի, Մյունիսի, Վիեննայի և այլ խոշոր քաղաքների ոմբակոծությունները: Այս նպատակին ծառայում ելին վոչ միայն այերոպանները, այլև դիրիժարները, վորոնց հարձակումներից հայտնի յեն գերմանական ցեղպելինների գիշերային արշավանքները լոնդոնի վրա: Այս հարձակումների պատասխանն եր, վոր Անդրիայի դեկավարությամբ դաշնակիցները կազմեցին մի ահռելի ծրագիր, թերլինը ողանավերով ոմբակոծելու համար: Յեկ յեթե պատերազմը չդադարեր, հավատացած ենք, վոր նրանց ծրա-

գիրն իրագործվելու դեպքում այժմ Բերլինը գոյություն չեր ունենալ:

Ոմբածիդ ողանավերի խոշոր արժանիքներից մեկն ել այն եր, վոր նրանք կարողանում ելին լայնացնել ոոմբակոծման ասպարեզը:

Ուր չելին համառում թնդանոթների ոումբները, այդտեղ ուղարկում ելին այերոպալաններ: Այսպիսով հարավոր եր լինում ոմբակոծության յենթարկել վոչ միայն թշնամու ֆրոնտի ուժերը, այլև նրա թիկունքը—առաջ բերելով ահաբեկում թե զորքի և թե բնակչության մեջ:

Ոմբածիդ ողանավերի ոգնությամբ հարավոր եր լինում ոմբակոծել ու պայմանեցնել թշնամու ոազմամթերքների պահեստները, գործարանները, յերկաթուղիններն ու կամուրջները, քաղաքները, ամրոցները և այն:

Պատերազմի ընթացքում նրանց կատարած գործերի պատերազմի պարզելու համար բավական ե հիշել այն փաստը, վոր միայն Գերմանիան վերջին պատերազմի ընթացքում ողից քցել ե 2,000,000 փութ ոումբ, անկասկած առաջ բերելով ահազին ավերածություններ: Հայտնի յե նաև այն, վոր 1918 թ. պատերազմի վերջին հինգ ամիսների ընթացքում միայն անգիտական ծովային ողանավերը սուզանավերի վրա քցել են 10,432 ոումբ, վորոնց ընդհանուր քաշը յեղել ե 132,174 փութ:

Պատերազմի վերջին տարիներում ոմբածիդ ողանավեր ավելի մեծ քանակով են պատրաստվել: Որինակ՝ միայն Գերմանիան 1915—18 թ. կառուցել ե 3,147 ոմբածիդ ողանավ, վորոնցից 1,264-ը (մոտ կեսը) կառուցված ե 1918 թ.:

Ոմբածիդ ողանավերը տեխնիկապես ավելի զարգացել են իմպերիալիստական պատերազմից հետո, վերջին «խաղաղ» տարիների ընթացքում, վորի մասին կիսունք հետևյալ գլուխներում:



**ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ՈԴԱՑԻՆ
ՈՒԺԵՐԻ ՎՈՉՆՉԱՑՈՒԽԸԸ**

Վերը բերած մի քանի փաստերը ցույց են տալիս այն խոշոր դերը, վոր խաղաց ողային նավատորմը վերջինհամ աշխարհային պատերազմի ժամանակ։ Կասկած չկա, վոր պատերազմող կողմերը պետք ե մտածելին նրա դեմ կովող միջոցներ գտնելու մասին։

Ենք ահա մենք տեսնում ենք, վոր պատերազմի առաջին շրջանում այերոպանների դեմ կովում եյին թնդանոթներով, գնդացիրներով, հրացաններով և այլ սովորական միջոցներով։ Մինչև անգամ դրա համար ստեղծվել եյին հատուկ թնդանոթներ (զենիտիա օրудիա), բայց և այնպես բազմաթիվ փորձերը պարզ կերպով ապացուցեցին կովի նման միջոցների անպետքությունն ու աննպատակահարմարությունը, վորովհետև ներքեից հեշտ չեր վնասել մեծ բարձրության վրա թուչող ողանակերին։ Նման միջոցների ոգտակարությունը միայն այն եր, վոր խանգարում եյին ողանավերին իրենց գործողությունները կատարել ավելի ցած դիրքերից։ Այս պատճառով ստեղծվեցին ու զարգացն հատուկ տիպի այերոպաններ (իստրեբիտելի—խորտակիչներ), վորոնք հարմարեցրած եյին ուղամական ողանավերի դեմ կովելու ողի մեջ։

Վերջիններս ունելին ավելի թեթև կառուցվածք և սովորական ողային ուղամանավերից ավելի բարձր ու արագ եյին թըռչում։ Նրանք զինված եյին գնդացիրներով։ Ողում կովելու այս միջոցը դրական հետեւանքներ տվեց, և նման ողանավերի թիվը զնալով ավելի ու ավելի յե շատանում, և նրանցից կազմվում են ողային հատուկ զորախմբեր։

**Ո Դ Ա Յ Ի Ն Ն Ա Վ Ա Տ Ո Ր Մ
ՈՒՐԻՇ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Բացի մեր մատնանշած աչքի ընկնող ծառայություններից, ողային նավատորմը պատերազմի ընթացքում գործադրում եյին և

ուրիշ կարիքների համար։ Պատերազմի վերջին շրջանում ասպարեզ յեկավ մի նոր տիպի ողանակ ևս, վոր հարմարեցված եր միջամտելու ցամաքի վրա տեղի ունեցող կոիմլերին։ Այդ ողանակը զինված եր մեծ քանակությամբ գնդացիրներով, վորոնցից կրակում եյին ցած, նրանց տակի մասը զրահապատ եր, վորը հնարավորություն եր տալիս ավելի ցած թոփչքից կատարել իրենց գործողություններն։ Նման տիպի այերոպաններն իրենց իսկական զարգացումն ստացան պատերազմից հետո, վորի մասին կխոսենք հետագայում։

Անցնելով ողային նավատորմի ոազմական նշանակության ընդհանուր բնորոշմանը, ավելորդ չենք համարում բերել մի հետաքրքրական փաստ Խորհրդային Հայաստանի իրականությունից, վոր ավելի քան պարզ կերպով հաստատում ե նրա անգնահատելի դերը։

1921թ. դաշնակցականների ավանտյուրիայի ժամանակ, մեր հայկական կարմիր բանակը, Նախիջևանի ֆրոնտում կտրված արտաքին աշխարհից ու կարմիր բանակից գտնվում եր ծանր կացության մեջ, յերբ թիֆլիսից, մարտի 25-ին, Նախիջևան թուավ բայլշեկիյան ռազմական այերոպանը ղեկավարությամբ ողաչուներ՝ Մելնիկովի և Կուզերինի։ Ալդ այերոպանը մեր բանակին հասցեց մի խոշոր գումար, վորը նյութապես բարձրացրեց բանակի դրությունը։ Բացի ալդ անմիջական նյութական ոգնությունից նա ունեցավ խոշոր ազիտացիոն նշանակություն թե մեր բանակի համար, վորի արամադրությունը բարձրացավ այդ կապի հետեւանքով և թե մահացու հարված հասցրեց դաշնակցականների պրովակացիոն լուրերին։ Ոդանավը թուավ Յերևանի վրայով, վորն այն ժամանակ գտնվում եր դաշնակցականների ձեռքին։ Ալդ թոփչքով բնակչության առաջ մերկացվեցին դաշնակցականների տարածած այն ստահու լուրերը, վոր իբր թե Վրաստանում ու Աղբբեջանում բայլշեիզմը պարտված ե և այնտեղի սպիտակները դաշնակցիցների հետ պատրաստվում են արշավանք կատարել Խորհրդային Ռուսաստանի վրա։

Վերը տեսանք ողային նավատորմի մի շարք գնահատելի աշխատանքներն ու նրա ռազմական նշանակությունը։ Այժմ բերենք մի քանի թվեր, վորոնք ամենից լավ կապացուցեն նրա զարգացման ընթացքը։

Պաշտոնական աղբյուրներից հայտնի յե, վոր մի քանի խոշոր պետություններ 1914—1918 թ. պատերազմի ընթացքում ընդհանուր առմամբ կառուցել են 174,719 այերոպլան և 207,864 շարժիչ։ Այս թվերից ամեն մի յերկրին ընկնում են շարժիչ։

Յերկր	Այերոպլան	Շարժիչ
Գեմանիա	47,637	40,449
Ֆրանսիա	67,982	85,317
Անգլիա	47,873	52,598
Ամերիկա	11,227	29,500
Ընդամենը	174,719	207,864

Չնայած վոր այդ շրջանում այրոպլաններն ավելի թանգարժեցին (միջին հաշվով 25,000 ո.) և մեծ դժվարություններով եյին պատրաստվում, վորովհետև ավիո-արդյունաբերությունը դեռ անզարդացած դրության մեջ եր, այնուամենայնիվ ինչպես ցույց են տալիս թվերը, պահանջի թելադրանքով ողային նավատորմը խիստ ուժեղացել եր նաև քանակապես։

Հայտնի յե նաև, վոր ըոլոր պատերազմող պետությունների ռազմական ողային նավատորմերը վերջին համաշխարհային պատերազմի ընթացքում ծախսել են 232 միլիոն կիլոգրամ բենզին և 30 միլ. կիլոգրամ յուլ։

Վերջացնելով մեր խոսքն ողային նավատորմի կատարած դերի և նվաճումների մասին, ավելորդ չենք համարում բերել ընդհանուր պատկերը լրացնող մի փաստ։

Համաշխարհային պատերազմի վերջին շրջանում Առասի մոտ տեղի ունեցած նշանավոր ճակատամարտին մասնակցում եր 3000-ից ավել ռազմական ողանավ։

Ք Ա. Դ Ա. Ք Ա. Ց Ի Ա. Կ Ա. Ն ՈՂԱՅԻՆ ՆԱՎԱՏՈՐՄԸ

Մենք նախորդ գլուխներում տեսանք, վոր ողային նավատորմը ռազմական տեսակետից ունի խոշոր նշանակություն, բայց սա պետք է համարել անցողական, վորովհետև վերջի վերջո պատերազմը դասակարգերի վերացման, կապիտալիզմի խորտակման հետ միասին գերեզման կիջնե, ուստի և բնական ե, վոր ողային նավատորմն ապագայում խաղաղ կյանքին ու մարդկային կուլտուրական պետքերին ե ծառայելու միայն։

Ինչպես գիտենք քաղաքացիական ողային նավատորմը պատերազմից հետո անցնում է խաղաղ կյանքի ասպարեզը, ուր նա հանդես ե բերում գնահատելի ծառայություններ։

Վերջին մի քանի տարիների ընթացքում քաղաքացիական ողային նավատորմն ունեցավ բավական ուժեղ զարգացում հենց նույն իմպերիալիստական յերկրներում շնորհիվ հետեւյալ պատճառների։

1. Իմպերիալիստական յերկրները քաղաքացիական ավիացիայի մեջ գտնում են ռազմական պետքերի ոեզերվ, քանի վոր պատերազմի ժամանակ այն ևս հաջողությամբ կարելի յե ոգտագործել ռազմական պետքերի համար։

2. Խաղաղ կյանքի պայմաններում, յերբ ռազմական բյուջեն թույլ չի տալիս շարունակել խոշոր պատվերներ տալ ավիո-գործարաններին, քաղաքացիական ավիացիան ե, վոր մատակարարում ե գործարաններին պատվերներ. այսպիսով վոչ միայն պահպանում ե նրանց գոյությունը նյութապես, այլև դյուրություն ե ընձեռում զարգացնելու ավիո-արդյունաբերությունը։

3. Խաղաղ ժամանակներում քաղաքացիական ողային նավատորմն ե, վոր հնարավորություն ե տալիս զորացրված ողաչուներին և մյուս ավիո-մասնագետներին պարապել իրենց արհեստով։ Այլ կերպ այդ մասնագետները ստիպված կլինեն զբաղվել ուրիշ աշխատանքներով ու մոռանալ իրենց հիմնական

աքհեստը: Պատերազմի դեպքում պետություններն ստիպված պետք ե լինեն նորից բանալ մի շարք ավիո-դպրոցներ, գործադրելով ահագին աշխատանք ու ժամանակ մասնագետների կադրը վերապատրաստելու կամ նորը պատրաստելու համար:

Այս այս պատճառների շնորհիվ ե, վոր պետությունները դրամական խոշոր ոգնություն են ցույց տալիս քաղաքացիական ոդային նավատորմին, վոր դեռևս ի վիճակի չե իր ծախքերը հանելու: Հարկավոր և նշել, վոր ամբողջ աշխարհում չը կան վոչ պետական և վոչ մասնավոր ընկերություններ, վորոնց ոդային տորմիղը կարողանար նյութական տեսակետից ինքնուրույն կերպով պահպանել իր գոյությունը:

Այս պայմաններում սկիզբ առած և զարգացած քաղաքացիական ոդային նավատորմը կարողացել ե կյանքում տեղ գրավել՝

1) Իբրև հաղորդակցության միջոց,
2) Իբրև գյուղատնտեսական ասպարիզում ոգտակար աշխատանքներ կատարող,

3) Իբրև անտառային անտեսության աշխատանքներում ուժանդակող ու իբրև դժբախտ դեպքերից փրկող,

4) Իբրև զանազան աշխատանքներով գիտության ծառայություններ մատուցանող և այլն:

ՈԴԱՅԻՆ ՆԱՎՏՈՐՄՆ ԻԲՐԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ

Քաղաքացիական ոդային նավատորմը ամենից առաջ ոգտագործվել ե այս ասպարիզում: Մարդիկ ողանավով փոխադրական գործի համար սկսել են ոգտվել 1918 թվից, պատերազմից անմիջապես հետո: Այնուհետև մի քանի տարիների ընթացքում ոդային նավատորմը հաղորդակցության գործում կարողացավ բռնել պատվավոր տեղ: Վորպես փոխադրական միջոց նա ապագայում մեծ դեր ունի և այս ասպարիզում հայտնաբերած ընդունակությունները թույլ են տալիս յենթադրելու, վոր նա առաջիկայում հաջողությամբ մրցելու յե ուրիշ փոխադրական միջոցների հետ վորպես ամենաարագ, ամենաեժան և ամենաանվտանգ փոխադրական միջոց:

Այժմս ել փոխադրության գործում ոդային նավատորմը համարվում ե ամենաարագը, վորովիետե մեկ ժամում անցնում ե ավելի քան 200 վերստ: Բացի այդ, ոդային ուղին ցամաքայինի համեմատությամբ շատ կրճատ ե: Սա պարզ ե այն պատճառով, վոր շատ անգամ մարդիկ ստիպված են լինում սարերի, ջրերի, ձորերի և այլ տեսակ անհարթությունների պատճառով ցամաքային ճանապարհները տանել վոչ ուղիղ գծով, վորով և յերկարում ե անցնելիք տարածությունը, մինչդեռ ոդանավը ճանապարհը կտրում ե ուղիղ և կարճ գծով: Մեր ասածները պարզելու համար բերենք մի քանի փաստեր մեր կյանքից: Թիֆլիսից—Յերևան գնացքն անցնում ե 22—23 ժամ, իսկ նույն տարածությունը, ինչպես փորձերը ցույց տվին, որինակ՝ Յունկերս մարդատար ողանավով անցնում են մոտ $1\frac{1}{2}$ ժամում: Յերկաթուղով Յերևան—Թիֆլիս ճանապարհը 360 վերստ ե, իսկ ոդային գծով մոտ 200 վերստ: Լենինական—Յերևան տարածությունը գնացքներն անցնում են $6\frac{1}{2}$ —8 ժամում, իսկ նույն ոդանավով այդ տարածությունն անցնում են 30—40 ըովեյում: Յերևանից—Լենինական յերկաթուղիով 150 վերստ ե, իսկ ոդային գծով մոտ 60 վերստ: Մեր հեռավոր գավառը՝ Զանգեզուր գնալն այժմ տեսում ե 4—5 որ, իսկ ոդանավով կարեմ յե անցնել $2\frac{1}{2}$ ժամում:

Կա և ուրիշ հանգամանք: Ոդային ուղիներ կազմակերպելը շատ ավելի եժան ե նատում ու հեշտ ե գլուխ գալիս, քան յերկաթուղիները ու խճուղիները: Ոդային ուղի պատրաստելու համար անհրաժեշտ ե միայն վորոշ կետերում ունենալ հարթ հրապարակներ, վոր ողանավերը կարողանան իջնել ու բարձրանալ: Ոդային հաղորդակցությունն ավելի շահեկան և նպատակահարմար ե առանձնապես լեռնային մասերում, ուր, բնականաբար, դժվար են կառուցվում և յերկարում են ճանապարհները:

Փաստերն արդեն ցույց են տվել, վոր հենց այժմվանից ոդային նավատորմը հաղորդակցության մեջ կարելի յե համարել ամենաանվտանգը: Այս բանն ապացուցվում ե վիճակադրական առվանդությունով, վորոնցից յերևում ե, վոր ոդով ճամբորդող յու-

ըաքանչյուր 15,000 ուղևորի դժբախտ պատահարի միայն մեկ դեպք ե ընկնում:

Կասկած չկա, վոր ողային նավատորմը տեխնիկայի հետագա զարգացման ու կատարելագործման շորհիվ կդառնա միանգամայն ապահով:

Մտորե բերված վիճակագրական աղյուսակից և տեղեկություններից կտեսնենք ողային նավատորմի զարգացումն ու նրա կատարած դերը հաղորդակցության մեջ մի քանի տարվա ընթացքում:

Յերկրների և ուղարկումը	Վ. տր	Ք. լին	Թուչքների քանակը	Աղող անցած տարածություն- նը (կիլոմետ- րերով)	Փոխադրում՝ ներկայացված վրանից (կիլո- մետրով)	Փոխադրում՝ քանակով	Փոխադրում՝ կանոնակիր	Աղող գրանիում կանոնակիր	Աղող գրանիում վիրակարգած	Վարչական սպառնակած
Գեմանիա	1920	2900	670,303	6,000	900	3907	3	—	—	—
»	1921	4680	1,654,000	30	710	6820	—	—	—	—
»	1922	2504	1,203,680	65	370	7730	—	—	—	—
Սովորական Քյոնիգսբերգ	1922	6 ամիս	313	153,000	20,353	1,077	319	—	—	—
Ֆրանսիա	1919	842	234,619	6,031	203	291	—	—	—	—
»	1920	4400	777,908	46,774	3,857	7600	—	—	—	—
»	1921	5616	3,193,383	177,141	14,712	8726	—	—	—	—
»	1922	7626	—	305,378	40,954	7938	—	—	—	—

Ամերիկայի Միացյալ Նահանգներում ողային հաղորդակցությունը 1919—1922 թ. բոլոր գծերում կտրել է 3,622,500 կիլոմետր տարածություն, փոխադրել է 80,000,000 նամակ։ Ամբողջ յերեք տարվա ընթացքում յեղել է աղետի 23 դեպք, վոր համեմատելով անցած տարածության հետ, ամեն 157,600 կիլոմետրին լնկնում ե մեկ դեպք, մինչդեռ նախապատերագոյան վիճակագրությամբ 15 կիլոմետրին լնկնում եր մեկ դեպք։ Վերջին տեղեկությունն ավելի ճիշտ բորոշողն է, թէ այդքան կարճ ժամանակամիջոցում տեխնիկակես վորպիսի ուժեղ զարդացում ե ունեցել ողային նավատորմը։

Նկատի ունենալով, վոր կույլտուրական ֆակտորներից մեկն ել հանդիսանում ե հաղորդակցությունը, դժվար չե գնահատել ողային նավատորմի նշանակությունը, վորպիս կապի լավագույն միջոցներից մեկը, (եժան, արագ և անվտանգ) մանավանդ լեռնային յերկրների, աղքատ և հետամնաց ժողովրդների, փոխադրական միջոցներով աղքատ պետությունների համար քաղաքացիական ողային նավատորմը ամենալավ միջոցն ե, վոր կարող ե նրանց այդ դրությունից դուրս բերել։


Ք. Ա. Ղ. Ա. Ք. Ա. Ց Ի Ա. Կ Ա. Ն Ո Դ Ա. Ց Ի Ն ՆԱՎԱՏՈՒՐՄԸ ԳՅՈՒԿԻ ՀԱՄԱՐ

Բացի հաղորդակցության գործում ունեցած խոշոր նշանակությունից ու կատարած դերից, քաղաքացիական ողային նավատորմը վերջին տարիներում հանդես ե գալիս և մեր տնտեսության մի շարք ճյուղերում, ուր նա մատուցանում է խիստ արժեքավոր ծառայություններ։ Խնչպիս ցույց ե տվել փորձը՝ գյուղատնտեսության մեջ ևս ողային նավատորմը շատ բան ունի անելու։

Գյուղատնտեսության մեջ նա ամենից առաջ լավ միջոցն ե վասասառների դեմ կովելու համար։

Ամերիկայում արգեն մի քանի տարի յե, վոր ողանավերից ոգտվում են վասասառների դեմ կովելու համար և բազմաթիվ փորձերը ցույց են տվել, վոր նա ամենալավ միջոցն ե վասասառների վոչնչացման համար։ Ողանավը այդ աշխատանքները նախ կատարում ե արագ, նա կարող ե մի որվա մեջ վասասառներից փրկել 400—500 դեսյատին տարածություն։ Նույն աշխատանքը սովորական ձևով կարող են կատարել մոտ քսան մարդ 15 որվա ընթացքում։ Ողանավով ցանքի ամեն մի դեսյատինը վասասառներից փրկելը նստում ե մոտ 10 կոպեկ, մինչդեռ սովորական ձևով նույն աշխատանքը նստում ե 20—25 կոպեկ։ Ողային նավատորմը վասասառների դեմ կովում ե ցանքերի վրա զանազան թունավոր նյութեր (փոշիներ, գտեր, հեղուկներ) սրսկելով։ Նա կարողանում ե կովել նաև մո-

ըեխի տեղափոխման դեմ, Ողանավը ցած թռչելով կարում ե նրանց ճանապարհը և բաց թողնում հեղձուցիչ գազեր, վորոնցից տեղն ու տեղը վոչնչանում են մորեխները։ Ողանավերով կարելի յե վոչնչացնել նույնիսկ մորեխների ձվերը։



Այերոսլանը վնասատուների դեմ թունավոր
փոշի ցանելիս

Նման ձևով ողանավը կռվում ե նաև ծառապտուղներին վնասող թրթուոփի և ուրիշ վնասատուների ու մանավանդ բամբակի չոռի դեմ։

Մեզ մոտ, խորհրդային յերկրներում, այս ասպարիզում

արդեն կատարվել են մի շարք փորձեր և չպետք ե կասկածել, վոր մի-յերկու տարուց հետո այդ գործը լայն կերպով կը կիրարկվի նաև մեզանում։

Բացի սրանից ոդային նավատորմը կռվում ե նաև կարկտի ամպերի դեմ։ Ողանավը ելետրականության միջոցով վորոշ հատկություն ստացած ավազը շաղ ե տալիս կարկտի ամպերի վրա ու ցրում նրանց։

Գյուղատնտեսությունը ոդային նավատորմից ոդտվում ե նաև ցանքերի քանակի և վորակի հաշվառման ու բերքի չափը պարզելով։ Այերոսլանից կատարած լուսանկարի միջոցով հարավոր ե լինում ճշտորեն պարզել ցանքերի տեսակներն ու նրանց տարածությունը։ Վերջին տարիներում արած փորձերը ցույց են տվել, վոր այերոսլանի միջոցով դաշտերը կարելի յե ավելի արագ և կանոնավոր կերպով սերմանել։

Ցեղանակը գուշակելու համար ևս ոդանավը կատարում ե արժեքավոր ծառայություններ, հաղորդելով ոդերևութաբանական կայաններին ոդի վերին շերտերի դրության մասին։

Ցեթե մեր ասածներին ավելացնենք և այս, վոր ոդանավը միաժամանակ մատչելի ու գյուղին փոխադրական միջոց կարող ե լինել գյուղի և քաղաքի մեջ, ապա կտեսնենք, վոր իրոք ոդային նավատորմը մոտ ապագայում լինելու յե գյուղացու ամենազատակար բարեկամներից մեկը։

Ո Դ Ա Յ Ի Ն Ն Ա Վ Ա Տ Ո Ր Մ Ի Դ Ե Ր Հ Ա Ն Տ Ա Ռ Ա Յ Ի Ն Տ Ի Տ Ե Ս Ո Ւ Թ Յ Ա Ն Մ Ե Զ

Անտառային խոշոր տնտեսությունների մեջ ամենավտանգավոր ու ավերիչ թշնամին հրդեհն ե։ Խնչպես հայտնի յե, անտառային խոշոր տնտեսությունների մեջ հրդեհը շատ ուշ ե նկատվում, իսկ մինչև այդ հսկայական ավերածություն ե առաջ գալիս։ Այս դեպքում գրեթե միակ ոդտակար միջոցը ոդանավը ե։ Նա հաճախակի հետախուզական թոփշքներ ե կատարում բոլոր խոշոր անտառների վրայով և հրդեհի դեպքը նկա-

տում ե հենց ծագման վարկյանից ու շտապ կերպով հայտնում ե ուր հարկն ե, վորպեսզի միջոցներ ձեռք առնեն հրդեհը հանգցնելու համար: Յերբեմն ողանավա ինքը մամնակցում ե հրդեհը հանգցնելու աշխատանքներին: Նա այդ ժամանակ իր հետ վերցնում ե կրակը հանգցնող ռումբներ և վերկից քցում ե հրդեհի մեջ:

Այերոպալանների նման աշխատանքը ներկայումս լայն կերպով կիրառվում ե Ամերիկայում, ուր կան հարուստ անտառային տնտեսություններ:

Միայն 1921 թ. ընթացքում Ամերիկայում ոդային նավատորմի միջոցով յերեան են բերված հրդեհի 832 դեպք և այերոպալանի այս ծառայության հետևանքով կորստից փրկված են ավելի քան 70 միլիոն արժեքավոր ծառ:

Բացի սրանից, անտառային տնտեսության կարգավորման գործում ոդային նավատորմը հաջող ու արագ կերպով հաշվի յե առնում անտառների ծառերի քանակն ու վորակը: Այս աշխատանքը նա կատարում ե լուսանկարելով: Լուսանկարներից հեշտությամբ վորոշվում են ծառերի տեսակներն ու նրանց քանակը:

Այերոպալանով նաև հսկում ու պաշտպանում են անտառների ծառերը գողացվելուց, անմատչելի լեռնային մասերում ցանում են ծառերի սերմեր և այլն:

Ոդային նավատորմի այս աշխատանքները շատ ավելի եժան են նստում, բացի այդ ժամանակի աճագին խնայողություն ե լինում:

Կասկածից դուրս ե, վոր ոդային նավատորմի ոգտագործումն անտառային տնտեսության մեջ հետզհետե ընդարձակվելու յե:

Զկնորսությունը, ինչպես հայտնի յե, խոշոր արդյունաբերության ճյուղերից մեկն ե, վորի զարգացման մեջ մարդկությունը չափազանց շահագրգուված ե: Այս ասպարիզում ել ողանավա անելիքներ ունի. բարձրից ջրի վորոշ խորությունը թափանցիկ ե գառնում և այերոպանից հեշտությամբն կատում են ձկների և այլ ծովային կենդանիների ծվարները տե հայ-


նում ձկնորսական նավերին: Այսպիսով ժամանակի և աշխատանքի մեծ խնայողություն ե լինում ձկնորսական նավերի համար:

ՈԴԱՅԻՆ ՆԱՎԱՏՈՐՄԸ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՆԱԳԱՆ ԱՍՊԱՐԻՉՆ ԵՐՈՒՄ

Բացի մեր մատնանշած խիստ ոգտակար աշխատանքներից ուղագմական, քաղաքացիական, փոխադրական տնտեսական և այլ ասպարիզներում ոդային նավատորմը ծառայություններ և մատուցանում նաև գիտության մի շարք ճյուղերին:

Հաղորդակցության դժվարությունների պատճառով յերկրի շատ մասեր չեն ուսումնասիրված. այժմ այերոպանի միջոցով այդ հսարավոր ե դարձել: Ձեռնարկվել են և ձեռնարկվելու յեն մի շարք թոփչքներ հյուսիսային և հարավային բևեռները ուսումնասիրելու համար: Այս ուղղությամբ Անգլիայի և Ամերիկայի կողմից 1924 թ. կազմակերպվեցին եքսպեդիցիաներ, վոր տեխնիքական աննպաստ պայմանների պատճառով անհաջող յեղան: 1925 թ. ևս եքսպեդիցիայի համար պարաստություններ են տեսնվում:

Ոդային նավատորմը գիտության ասպարիզում արդեն ցույց ե տվել մի շարք ծառայություններ, վորոնցից նշանավորը կարելի յե համարել հայտնի բևեռագետ ու ճանապարհորդ Ամուսղենի արած թոփչքը հյուսիսային բևեռը, ներկա տարվա մայիսի 21-ին: Ամուսղենը մի քանի ուղեկիցներով Շպիցբերգեն կղզուց թռավ գեպի հյուսիսային բևեռը. նրանից յերկար ժամանակ վոչ միտեղեկություն չկար ու շատերը կարծում եյին, վոր նա այլևս չի վերադառնա: Ամսուղենը 24 որից հետո հաջողությամբ վերադարձավ Շպիցբերգեն: Նա թեև մինչև բևեռի կետին չեր հասել, բայց կարողացել եր այդ կարճ ժամանակամիջոցում ուսումնասիրելնը մոտակա վայրերը: Ամսուղենը բևեռային ծովերում գտել ե 3,750 մետր խորություն, վորն ըստ գիտնականների հաստատման պնդում ե բևեռագետ հայտնի ճանապարհորդ Նանսենի յենթադրությունը, վոր բևեռը շրջապատված ե ջրերով:



Յաղագիտական ավագության ուժում իրավական պարզությունը լրացնելու համար՝ նիստական առ միշտ դաշտում անձնական քայլությունը տեսական իրավունքը հայտնաբերելու համար կարող է հարցում լինել:

չունի ցամաք. բացի դրանից, Ամսուդինը կատարել է մեծաքանակ ողերևութաբանական հետազոտություններ, վորոնք գիտական խոչը արժեք են ներկայացնում։ Ամսուդինը բնեուում էջել և սառուցների վրա, և այնտեղից ել բարձրացել է վերադարձին։

Այդ վերին աստիճանի արժեքավոր և վտանգավոր եքսպերիմենտի մասին, դժբախտաբար, առայժմ ավելի ասել չենք կարող, վորովինեաւ նոր սիայն տեղեկություն կար, վոր Ամսուդինը Շպեցբերգենից մելնել է հայրենիք վրտեղ անելու յեկեղուցում, իր կատարած աշխատանքների մասին։

Ամսուդինի այդ թոփչքն ամենից լավ հաստատում է բերվեո թոչելու հնարավորությունը և կասկած չկա, վոր մօտքապագայում ողային նավատորմը հնարավորություն կտա մինչև բնեուի զագաթը թոչելու։

Բնեուագետ Նանսենը, հասածայն իր արած հայտարարության, առաջիկա տարում ձեռնարկելու յենման մի թոփչքը՝ յուսային բնեուը, վոչ թե այերոպալանով, այլ դիրիժաբլով։

Ծովագնացության համար գիտությունը գեռ ևս կարոտ եքազմաթիվ խնդիրների լուսաբանության և ուսումնասիրության։ Այս նպատակի համար վերջերս ողային նավատօրմը կատարում է բավականաչափ աշխատանք, նա զբաղվում է ծովի հատակն ուսումնասիրելով, յերեան երերում ծովերի հատակում հրաբուխներից առաջացած ըլուրները, վորոնք հաճախ նավերի խորտակման պատճառ են դառնում։ Հյուսիսային ծովերում ու ովկիանոսներում ողանավը հայտնաբերում է սառցակույտեր և վորոշում նրանց շարժման ընթացքն ու ուղղությունը, վորի մասին ուղիոյով իրազեկ ե անում նավերին, և հաճախ նրանց փրկում խորտակման վտանգից։

Այժմ այս ուղղությամբ աշխատանքներ կատարում են նաև խորհրդային ողային նավատօրմը հեռավոր հյուսիսում, վորտեղ նա ունի մի քանի բազաներ։ Այս բազաներից ոգնությամբ վարսորդական նավերը բավականաչափ հաջող աշխատանքներ են կատարում։ Այդ բազաները, միաժամանակ մեր ծովային հարստությունները պաշտպանում են ոտարերկրյա վորսորդական նավերից։

Ողային նավատորմն ուսումնասիրում ե ողի վերին շերտերն ու նրա շարժումները, վորոնք խոշոր ազդեցություն ունեն յերկրի յեղանակի վրա:

Այերովալանն իր ուսումնասիրության հետևանքը հաղորդում ե համապատասխան ողերեսութաբանական կայաններին, վորոնք ըստ այդ տեղեկությունների կազմում են առաջիկա յեղանակի ցուցակներ:

Գիտության և տեխնիքայի ասպարիգում արդեն ողային նավատորմը խոշոր գեր ե խաղում: Վերջնիս շնորհիվ կազմը վում են քարտեսներ, զանազան շինարարական ձեռնարկությունների (յերկաթուղագծերի, խճուղիների, ջրանցքների և այլն) նախագծեր:

Քաղաքացիական ողային նավատորմի թված աշխատանքները, թեև լրիվ չեն, այնուամենայնիվ հաստատում են, վոր նա իրոք մի կույլուրական խոշոր գենք ե և ապագայում մեծ անելիքներ ունի այս տեսակետից ու արժանի յե հատուկ ու շաղրության:

ՈԴԱՅԻՆ ՆԱՎԱՏՈՐՄԻ ԱՅԺՄՅԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Նախքան ժամանակակից ողային նավատորմի ներկա վիակի մասին տեղեկություններ տալը մի քանի խոսք ասենք այն մասին, թե ինչ նշանակություն ե տրվում ողային նավատորմին ապագայում:

Նախորդ գլուխներում արդեն ցույց տվեցինք, թե ինչ ծառայություններ ե մատուցանում ողային նավատորմը պատերազմի ժամանակ:

Այժմ ուշադրության կենտրոնն այն ե, վոր տեխնիքապես կատարելագործեն ողանավը: Այս տեսակետից յեթե համեմատելու լինենք այժմյան ողային նավատորմը պատերազմի շրջանի նավատորմի հետ, կտեսնենք վոր, խոշոր չափով բարելավումն ու կատարելագործումն ե տեղի ունեցել: Ամենից ուժեղ չափով զարգացնում են ոմբածիզ և խորտակիչ ողանավերը, վորոնց կարողության վրա խոշոր հոյսեր են դըր-


վում: Առաջին տեսակի մեջ լավագույնը կարելի յե համարել 1924 թ. շինված անզլիական ոմբածիզ — «Բերլինգ Բուրգեր» ողանավը: Այս ողանավը ունի վեց շարժիչ, վորոնց ընդ-

(Լուսապատճենական թիւ էլեկտրական հարկանի լուսապատճենական թիւ էլեկտրական հարկանի)



հանուր ույժը հավասար է 2700 ձիու ուժի: Նա վերցնում է 5,000 կիլոգրամ (կիլոգրամը = $2^{1/2}$ ֆունտի) պայմուցիկ նյութ: Ողում հարձակվող այերովալաններից պաշտպանվելու համար նազինված ե 7 զնդացիքներով և 1 փոքր թնդանոթով:

Այս ողանավի ղեկավարողների կազմը բաղկացած է 12 հոգուց: Նրա ընդհանուր քաշը բեռի հետ միասին հավասար է 19,500 կիլոգրամի, յերկարությունը՝ $21\frac{1}{2}$ մետր (մոտ 33 ար-



Յունկերս—Լարսեն ողանավը 30 գնդացիքներով զինված մասնակցում և կոիմիերին

մին), թերի ծավալը $36\frac{1}{2}$ մետր (մոտ 50 արշին) բարձրությունը՝ $6\frac{1}{2}$ մետր (մոտ 10 արշին):

Յերկրորդ տեսակի ողանավերը նշանավոր էն արտգո-

բարձր թռչելու կարողությամբ: Լավագույններն են ամերիկական «Նեմֆ-Կերտիս» 500 ձիու ուժ ունեցող ողանավերը, վորոնց արագությունը հավասար է մոտ 400 կիլոմետրի մեջ ժամում:

Այժմ պարզացվում էն և յերրորդ տեսակի ուսկմական ողանավեր, վորոնց նպատակն է միջամտել հողի վրա տեղի ունեցող կոփիմերին: Ինչպես վերը ասացինք, այդ տեսակի ողանավերը ծագում ունեցան պատերազմի վերջին շրջանում, բայց իրենց իսկական զարգացումը ստացան այժմ: Նրանցից ամենանշանավորը պիտի համարել առերիկական «Յունկերս-Լարսեն» ողանավը: Նա ամբողջովին դյուրակումին մետաղից է, զինված է 30 գնդացիքով, վորոնցից 28 հարմարեցրած են դեպի ցած կրակելու համար, իսկ 2-ը մյուս ուղղություններով՝ ողային թշնամիներից պաշտպանվելու համար:


Բոլոր գնդացիքները սիմառին մի ըստեցում կարող են արձակել 4,000 գնդակ: Յու գնդացիքը ղեկավարում է միայն մեկ մարդ, և այսպիսով մեծ խնայողությունն է առաջ գալիս կենդանի ուժերի վերաբերյալ: Ուստանավը ներքին մասից զրահապատճառ է բարակ պողպատյա զրահով, վորը նրան թույլ է տալիս իր գործողությունները կատարել և հաւեւմատաբար ցածր թուչքից:

Այդ ողանավերը Արտադրվում էն Այերիկայում «Յունկերս»-ի գործարանի բաժանմունքից:

Ապագա պատերազմում մեծ դեր է խաղալու այերոպանը նաև ծովային կոփիմերում: Այս է պատճառը, վոր բոլոր պետություններն ել մտահոգված են իրենց բոլոր ծավային ուսկմանավերը ապահովել համապատասխան քանակի ուղանավերով՝ վորպեսզի նրանց պաշտպանեն այերոպանների հարձակումներից: Նույնը կատարվում է նաև սուզանավերի վերաբերմամբ: Բացի այս, ընդհանուր ծովային նովատորմը պաշտպանելու համար պատրաստվում են մեծ քանակությամբ ծովային այերո-բազաներ բաղմաթիվ ողանավերով: Այերո-բազաները հատուկ շոգենավեր են, վոր ծովում շրջում են իրենց վրա վերցրած ողանավերի հետ միասին: Այդ ողանավերը հարկ

յեղած դեպքում թոփշքներ են կատարում: Նման այերո-բազաների կառուցումով մտահոգված են դիմավորապես խոշոր նավատորմիդ ունեցող պետությունները (որինակ Անգլիան, Ամերիկան և այլն):

Ողային նավատորմի անհրաժեշտությունը և նրա վտանգավորությունը ծովային նավատորմի համար հաստատվեց գրինավորապես վերջին 1922—23 թ. ընթացքում այն փորձերի հիման վրա, վորոնք կատարվեցին Ամերիկայում ու Անգլիայում:




Ծովային ավիո-կայան (բազա)

Այդ փորձերի հաջողությունները խոշոր ազդեցությունունեցան ծովային նավատորմի հրամանատարական կազմի վրա, վորը, մանավանդ Անգլիայում, շատ պահպանողական եր և յերկար ժամանակ չեր ուղում հասկանալ, վոր ողային նավատորմը մի գերազանց ռազմական գենը ե:

Այդ փորձերը կատարվում եյին Թերմանիայից մնացած հին տեսակի ծովային նավերի վրա, վոր ազատ ծովում ուղարկոծում եյին այերոպալաններից: Փորձերը ցույց տվին, վոր ողից քցած մեկ ռումբն ել կարող ե խորտակել անազին նավը, վոր արժեքով շատ տվելի թանգ ե, քան ամենալավ ողանավը: Որինակ՝ ժամանակակից մեկ դրեանուան արժե 80—90 միլիոն ռուբլի, իսկ այդ գումարով կարելի յե գնել մոտ 2,000 ողանավ:


Այս փորձերից հետո յե, վոր ծովային հրամանատարական



Դիմավորների ծովային մայր կայանի հանդուսակայդ (որինակ առաջակայացած մատուցում է առաջակայացած մատուցում)

կազմը հրաժարվեց իր նախկին կարծիքից և համոզվեց, վոր իրոք ողային նավասորմը ծովային նավատորմիդի համար հանդիսանում է ամենավանդավոր թշնամին։ Վերջին կարծիքի լավագույն արագարարությունը նշանավոր ծովակալների հետեւյալ հայտարարություններն։

Նրանցից մեկն ասել ե՞ «Դրեդնուտը մեռավ, ապագան ողային նավատորմինն ե»։ իսկ մի ուրիշը — «Ֆեթե մեր դրեդնուտները չսովորեն սուզվել, նրանք ողային նավատորմը կը փոչնչացնե»։



Ողանավը թոշելու ժամանակ քաղաքի վրա թողնում և հեղձուցիչ գաղեր

Այս պատճառով Անգլիան, վոր խոշոր ծովային պետություններից մեկն ե, սկսել ե թե քաղաքացիական և թե ռազմական ողային նավատորմի վրա առաջնակարգ ուշադրություն դարձնել։


Հանձին քիմիայի ռազմական ողային նավատօրման ունի-

իր լավագույն դաշնակիցը, վորի հետ միասին նրանք կազմում են ապագա պատերազմի հրեշտակոր զենքերից մեկը։

Այդ յերկուսն են, վորոնց չնորհիվ ապագա պատերազմը հաղթված պետության համար տնտեսական և ֆիզիքական բնաշնչան հավասար և լինելու։ Խեղդող և այլ գազերի ու պայմուցիկ նյութերի չնորհիվ ե, վոր ողանավը այդ պատերազմում բառիս բուն նշանակությումը ահարեկման և յենթարկելու վճչ միայն թշնամու բանակը, այլի նրա յերկը ամբողջ բնակչությունը։ Մի տասնյակ ողանավ կարող են ամենակարճ ժամանակամիջոցում կործանել և իսպառ վոչնչացնել ամենախոշոր մայրաքաղաքները։

Ողային նավատորմին զուգընթաց զարգանում է նաև ողային ոռումբների պատրաստման գործը, հնարինում են նորանոր տեսակները և ավելի ծանր քաշ ունեցողները։

Ժամանակակից ողային ոռումբները պարունակում են վոչ միայն ամեն տեսակի մողային գազեր (խեղդող, թունավորող, քնացնող, արտասվեցնող և այլն), այլև սուր վարակիչ հիվանդությունների բացիներ (խոլեռա, ժանտախտ, տիֆ և այլն), վորոնցից հեշտությամբ կարող են վարակվել բնակչություննու բանակը։



Ողային ոռումբների համեմատական մեծությունը

Միային ոռումբների համեմատական այդ յերկու դաշնակիցները (ողանավ և քիմիա) ապագա պատերազմում։

Մենք ասել ենք արդեն, վոր ողային նավատօրմն ապագամ ե իր զարգացման այն ամանը, յերբ ամեն մի ժամանակամ նորանոր բարեփոխություններ ե մտցնում նրա տեխ-


նիկայի և կառուցվածքի մեջ։ Այդ հիման վրա յե, վոր այժմ պետությունները շահագրգոված են վոչ թե ողային նավատորմի քանակի զարգացումով, այլ աշխատում են ստեղծել և զարգացնել ավիո-արդյունաբերությունն ու ավիո-գիտությունը, այս յերկուսն են, վոր նրանց հնարավորություն կտան պատերազմի դեպքում արտադրելու անհրաժեշտ քանակով վորակով բարձր ողանակեր։

ՈԴԱՅԻՆ ՆԱՎԱՏՈՐՄԸ ԶԱՆԱԳԱՆ ՅԵՐԿՐՆԵՐՈՒԽՄ

Ներկայումս պետություններն ուժեղ թափով զարգացնում են իրենց ավիո-արդյունաբերությունը և ընդարձակում են ավիացիայի կուտիվիզացիան։ Սարսափելի թափով ավելանում են ավիո-գործարանները, լաբարատորիաները, դպրոցները, վորոնց կառավարությունները նյութական լայն աջակցություն են ցույց տալիս։ Մեծ թվով կոնստրուկտորներ այժմ զբաղվում են ողանավերի տեսակների կատարելագործման խնդրով և կասկած չկա, վոր ուղմական ավիացիան արգեն մի շարք կատարելագործումներ արել ե, բայց ի հայտ չեն բերում իբրև ուղմական գաղտնիք, համենայն դեպս այն տեղեկություններն եր, վոր հայտնվում են, պարզ ցույց են տալիս, վոր ավիացիան այս վերջին մի քանի տարիների ընթացքում մեծապես զարգացել ե։ Այն պետությունները, վորոնք յերկար ժամանակ անտարբեր եյին դեպի ողային նավատորմը, վերջին տարիներում հասկանալով նրա խոշոր նշանակությունը, հիմնել են իրենց սեփական ավիո-գործարանները, դպրոցները, լաբարատորիաներն և այլն։

Զնայած, վոր ավիացիայի ծագման վայրը Ամերիկան ե, բայց իր պիտագոր զարգացումը նա ստացել է Ֆրանսիայում, վորն այժմ ունի ամենաուժեղ ողային նավատորմը։ Ամերիկան հայտնաբերում է մեծ ընդունակություններ ավիացիայի զարգացման գործում։ Վերջին տարիների ամենազիստ մրցանակները տարել ե ամերիկյան ողային նավատորմը։ Ինչ վերաբերում է Գերմանիային, պիտի ասենք, վոր նա առանձնապես չե-

գրավվել ավիացիայով—այլ պլիսավորապես ուժ ե տվել ողագարիկների։ Յեպակելին գիրիժաբանելի, զարգացմանը, վորոնք վերջին պատերազմի ընթացքում խոշոր դեր են խաղացել։ Այսուամենախիվ Գերմանիան ուներ լավ հիմքերի վրա դրված ավիարդյունաբերություն, վորը վերսայլի դաշնագրի համաձայն այժմ զրկված ե ուղմական ողանավեր կառուցելու հնարավորությունից և գտնվում ե գաշնակիցների խիստ հսկողության տակ։ Գերմանական ավիո-արդյունաբերությունը վերջին տարիներում տարիներում զրադշափած ե միայն բաղաքացիական ուղարկությունների վերաբերությունը պարզաբանելու համար։



Պրոֆ. Յ. Յունկերսի նոր նախագծած «Գիգանտ» ողանավը՝ ըստ 1950 թվականի պատճենագիրի։ Վոր ունենալու յի 4000 ձիու ուժի շարժիչներ և վերցնելու յի 100 ժարդ գծերին։ Կառուցելով։ Այս ասպարիգում առանձնապես աշքի լեն ընկնելու «Յունկերս» և «Փոկկեր» գործարանները, վորոնք ուղանավեր են մատակարարում գրեթե համաշխարհային ըոլոր գծերին։

Վերջերս սրբագրացնոր Յունկերս—(Յունկերս Գիրիժայի հիմնագիրը) նախագծել է մի շարք նոր քաղաքացիական մարտական սեծ ողանավեր, վորոնցից նշանագորը պիտի համարել դատար մեծ ողանավեր, վորոնցից նշանագորը պիտի համարել

«Գիգանտ» մարդատար Յունկերս ողաճավը — 100 ձամբորդների համար, վորի նկարը այստեղ տալիս ենք: Այդ ողաճավի մոդելը արգեն բազմակողմանի ստուգումների և փորձերի յենթարկված է, վորոնք հաստատում են նրա կոնստրուկտիվ ձրշտությունները:

Յերեխ շուտով ֆիրման կանցնի այդ ողաճավի կառուցմանը:

Այդ գործարանները բացի Գելուանիայից իրենց բաժանմունքներն ունեն — «Յունկերս» Ամերիկայում, իսկ «Ֆոլկեր» Հոլլանդիայում. վորտեղ զբաղված են վոչ միայն քաղաքացիան, այլև ուղղական ողաճավեր կառուցելով:

Տանք մի քանի տվյալներ խոշոր պետությունների ողային նավատորմի ներկա դրության մասին:

Փ Բ Ն Ս Ի Ա

Ֆրանսիական ողային նավատորմը բաժանվում է չորս գլուխավոր մասերի. 1) Յամաքային ուղղական ողային նավատորմ, վորը մտնում է բանակի ընդհանուր կազմի մեջ. 2) Ծովային ուղղական ողային նավատորմ, վոր մտնում է ծովային տորմի ընդհանուր կազմի մեջ. 3) Գաղութային ողային նավատորմ, վոր ծառայում է ֆրանսիական գաղութների պետքերին և գտնվում է գաղութային նախարարության արտամադրության տակ և 4) Քաղաքացիական ողային նավատորմ:

Ֆրանսիայում չորս տեսակ ողային նավատորմերն ել բավականաչափ զարգացած են և լավ կազմակերպված:

Ներկայում ֆրանսիական ուղղական ողային նավատորմը պատրաստի ունի մոտ 6,000 հատ վերջին տեսակի կատարելագործված ողաճավ, վորոնցով նա կարող է ամեն գարկյան պատերազմի գուրու գալ: Բավական են ասել, վոր վերջին խաղաղ ատարիների ընթացքում ֆրանսիական ողային նավատորմը ունի 37 հազար հոգուց բաղկացած մասնագետների կազմ:

Բացի դրանից, նա ունի նաև քաղաքացիական ուժեղ ողային նավատորմ — բաղկացած մեծաքանակ ողաճավերից, վորոնք պա-

տերազմի դեպքում նույնութեա կարող են ոգտագործվել ուղղմական կարիքների համար:

Բերենք մի քանի թվեր Ֆրանսիայի ուղղմական ավիացիայի կառուցման ծախքերի մասին:

1921 թ.	313,725,560	ֆրանկ
1922 թ.	287,910,900	»
1924 թ.	360,000,000	»

Բացի դրանից 1917—1922 թ. ծախսված է ծովային ուղղմական ավիացիայի վրա 512,000,000 ֆրանկ, իսկ գաղութային ավիացիայի վրա 1920—1922 թ. ծախսված է 11,626,905 ֆրանկ:

Իսկ 1925 թ. բյուջեյով, համաձայն «Լ'ԱՐ» ֆրանսիական ժուրնալի հազորդագրության, ավիացիայի կարիքների համար մրամագրվում է 823,009,300 ֆրանկ, վորից ուղղմական ավիացիային — 556,160,300 ֆր., ծովային — 111,849,000 ֆր., քաղաքացիական — 155,000,000 ֆրանկ:

Բաղաքացիական ողային նավատորմի համար ծախսված է՝

1920 թ.	128,794,330	ֆրանկ.
1921 թ.	124,240,867	»
1922 թ.	45,320,000	»

Ֆրանսիան ներկայումս ունի լավ կազմակերպված 46 ավիո-գործարաններ, վորոնց արդյունաբերությունը պատերազմի դեպքում մեկ տարվա ընթացքում կարող է տալ 50,000-ից ավելի լավագույն ողաճավ, կամ 4,160 հատ մեկ ամսում, կամ մոտ 140 մեկ որում:

Ֆրանսիայի ամբողջ տերիտորիան ծածկված է լավ, զարգած ողային գծերով և հարյուրից ավելի ողային կայաններով, վորոնցից ամենամեծը համարվում է Բուրժեյի (Պարիզի մոտ) ավիո-պարկը վորն որական միջին թվով ընդունում է 50 այերոպլան: Ֆրանսիան ողային գծերով կազմված է համարյա բոլոր ներկայության հետ և 1925 թ. յեթաղբարում ե կազմվելու յե նաև Մուկվայի հետ ողային հաղորդակցությամբ:

Ա.Մ Ե Բ Ի Կ Ա

Մինչդեռ Յեկրոպան, առանձնապես Թրանսիան, ուժեղ թափով զարգացնում եր ողային նավատորմը—Ամերիկան մինչև 1917 թ. համարյա չուներ ողային նավատորմ և նույնիսկ չեր հետաքրքրվում նրանով, չնայած վոր մինչև այդ թվականը, պատերազմի ընթացքում ողային նավատորմը արդեն ցույց եր տալիս իր մի շարք կարևոր հատկությունները: Իր ողային ուժերի կազմակերպման մասին Ամերիկան մտածեց այն ժամանակ, յերբ վորոշվեց նրա մասնակցությունը համաշխարհային պատերազմին: Նրանք ողային նավատորմի կազմակերպմանը կպան շատ լուրջ ու յեռանդուն կերպով—իսկական Ամերիկացու պես: Առաջին իսկ քայլերից նրանք հոգ տարան ստեղծելու և լավ հիմքերի վրա դնելու իրենց ավիո-արդյունաբերությունը: Այս գործի կազմակերպման համար նրանք ստիպված յեղան դրսից հրավիրել մասնագետներ, վոր նրանք չունեյին:

Ամերիկացիք վոչ մի ծախք չեյին խնայում և առաջին իսկ հերթին նրանք այդ նպատակի համար տրամադրեցին 640 միլիոն դոլար (մեկ դոլարը=մոտ 2 ռ.): Այս գումարից բացի նըրանք հետզհետե ավելի խոշոր գումարներ եյին ծախսում, և պատերազմից հետո հաշվետվությունը պարզեց, վոր 1917—1918 թ. թ. ընթացքում ուղամական ողային նավատորմի կարիքների համար տրամադրված է յեղել ընդամենը 1.687.054.785 դոլար, վոր մեր զրամով կազմում է 3.300.000.000 ռուբլի: Այս գումարը հավասար է մի մեծ պետական տարեկան բյուջեի:

Այս փաստն ինքնըստինքյան ապացուցում է, թե ամերիկացիք վորքան են կարողացել գնահատել ողային նավատորմի դերը:

Նման խոշորագույն գումարի ու ամերիկական վճռականության շնորհիվ եր, վոր հակառակ մեծ դժվարությունների ու խոշնդոտների, ամերիկան ավիո-արդյունաբերությունը մեծ թափով զարգացավ և այժմ վորակով առաջանական լինում է:

բոնում ամբողջ աշխարհում: Վերջերս այն բոլոր մրցությունների ժամանակ, վորոնց մասնակցեցին ամերիկացիք, նրանք մի շարք խոշոր մրցանակների արժանացան:

Ամերիկայն ավիո-արդյունաբերության աժման դրությունը կասկած չի թողնում, վոր պատերազմի դեպքում նա վորակապես ու քանակապես առաջին տեղը կրոնի—մանավանդ, վոր ամերիկական ավիո-արդյունաբերությունը հենց այժմյանից անցնում է սերիաներով ողանավեր արտադրելուն:

Ամերիկայն ավտոմոբիլային նշանագոր գործարանատեր Ֆորդը կազմակերպել է մի ընկերություն, վորը Դալտոնում ըստեղծում է ավիո-գործարան, վորը սերիաներով արտադրելու յետ այերոպլաններ նույն արագությամբ, ինչ արագությամբ այժմ նրա ավտոմոբիլի գործարանն է արտադրում:

Ներկայում Ամերիկան ունի շարժիչների 32 գործարան:


Նրա ուղամական ողային նավատորմի կազմը բարկացած է մոտ 22,414 մասնագետից, վորոնցից 1914 սպա յին:

Ամերիկայում բավականաչափ զարգացած է նաև քաղաքացիական ողային նավատորմը: Վերջին յերկու տարվա ընթացքում ուշադրությունը կենտրոնացված է գիրիժարների վրա, վորոնցով պատրաստվում են հիմնել մի քանի հեռավոր ողային գծեր: Առայժմս գիրիժարները Ամերիկան ստանում է Գերմանիայից, վոր կառուցվում է ամերիկացիների հատուկ պատվերով, ամենամեծ տեսակի ցեղալելիններ—Ֆրիդրիխսհաֆենում:

Այդպիսներից է Z, R 3 հսկայական ցեղալելինը—գիրիժարը, վորը կառուցվում էր մոտ յերկու տարվա ընթացքում և այս տարի միայն հանձնվեց ամերիկացիներին: Այս ողանակը Գերմանիայից թուավ Ամերիկա, առանց ձանապարհին կանգ առնելու և հանձնվեց Ամերիկական կառավարությանը: Z, R 3 գիրիժարի ժամանակակից գումարի 1924 թ. հոկտեմբերի 12-ին և իջավ Ամերիկայի Լեկիսերստեյտմ (Նյու-Յորկի մոտ) հոկտեմբերի 15-ին, անդընդհատ ձանապարհ գնալով 81 ժամ 17 րոպե—անցնելով 10,118,8 կիլոմետր տարածություն (միջնարազությունը՝ 112,23 կիլոմետր 1 ժամում):

Ճանապարհորդության ընթացքում ողանակի թոփչքի ա-

մենաբարձր կետը յեղել է 3,680 մետր։ Գերմանիայից Ամերիկա թուչելիս միայն Առլանտիան Ովկիանոսի վրայով անցել է 62 ժամում։ Հ R3 ողանավս իր հետն ունեցել է 27 ծառա-




ZR 3 ողանավս կազմությունը Առլանտիա

յող և Ամերիկան հատուկ հանձնաժողովի 4 անդամին։
Իջնելուց հետո պարզվել է, վոր ողանավի վերցրած բեն-
զինի (32¹/₂ տոնն, (1 տոնն=61¹/₂ փութ) մի քառորդը մնա-

ցել և անգործածելի, այս ապացուցանում է, վոր նա դեռ ողում
կարող եր մնալ ևս 20 ժամ։

ZR3 ողանավս ունի հետևյալ կազմությունը՝ ծավալը 70,000
խորանարդ մետր, յերկարությունը 200 մետր, շրջագիծը՝ 27,64
մետր, բարձրությունը 31 մետր։ Նրա ուժը կազմում են Մայ-
քան սիստեմի հինգ շարժիչ, յուրաքանչյուրը 400 ձիու ուժա-
նոց (HP) ընդամենը 2000 ԿԲ.

Բացի 30 ծառայողից և 33 տոնն բենզինից, վոր նրան կը
բավականացնի 5 որ ճանապարհորդելու, ZR3 գիրիժարին ի վի-
ճակի յե վերցնելու ևս 30 ճամբորդ և 15 տոնն բեռ։



Z R3 Դիրիժարի ննջարանը

Յեթև միջին արագությամբ նա անընդհատ մեկ ժամում
թուչի 110 կիլոմետր, 5 որում կարող է անցնել 15,000 կիլո-
մետր տարածություն, վոր հավասար է յերկրագնդի հասարա-
կածի (Էկվատորի) կիրին։

ZF3 ողանավը կառուցվել է Ֆրոբիխսաֆենի վերֆերում
(Նավաշինարան) 1922 թ. գաշնակիցների հատուկ թույլտվու-
թյանը ու ամերիկացիների պատվերով, վորի դիմաց վերջնա-
գերմանիայի պատերազմական պարտքից դուրս ե գրել յերկու
միլիոն դոլար (մոտ 4,000,000 ո.) իրրե այդ ողանավի արժեքը։

Այս գիրիժաբլի կառուցումից հետո դաշնակիցները կտրուկ պահանջ են գրել Գերմանիային քանդելու Ֆրիդրիխսհաֆենի ցեղակելինների վերֆերը, վորով Գերմանիան վերջնականապես զրկվում է նոր ցեղակելիններ կառուցելու հնարավորությունից։ Ֆրիդրիխսհաֆենի վերֆերը, ըստ մեր ունեցած տեղեկությունների, փոխադրվում են Ամերիկա, ուր նույն գերմանական մասնագետները շարունակելու են Ամերիկայի համար կառուցել նորանոր ուժեղ դիրիժաբլներ՝ Ամերիկայի «խաղաղ» կյանքի կարիքների համար։

1925 թ. ամերիկյան ռազմական ոդային նավատորմը նախագծել է հետևյալ աշխատանքները՝ Առլանտյան և Խաղաղ Ռվելիանուների ամերիկյան ափերը պաշտպանելու համար կառուցել 1,000 ռազմական այերոպլան, իսկ յերկրի պետական և արդյունաբերական խոշոր նշանակություն ունեցող շենքերն ու կառուցվածքները ուժակիությունից պաշտպանելու համար՝ նույնպես 1000 ռազմական այերոպլան։ Բացի այդ, բոլոր ծովային ռազմական այերոպլան։ Բացի այդ, բոլոր ծովային ռազմական քանակի խոշոր սուզանավերը ապահովել համապատասխան քանակի ոդանավերով։

Նույն թվին վորոշված ե ռազմական ոդային նավատորմի մասնագետների կազմը ավելացնել 2,500 ոդաչուներով և 40,000 մասնագետներով։

Ա. Ն Գ Լ Ի Ա

Անգլիայում ոդային նավատորմի մշակույթը բավական ուշ սկսվեց։ Առաջին այերոպլանն Անգլիայում կառուցված է 1908 թվին, իսկ 1912 թ. անգլիական ոդայինութերը բաղկացած ելին միայն 20 այերոպլանից։ Անգլիացիները համաշխարհային պատերազմում համեմես յեկան ոդային թույլ ուժերով։ Նրանք ունելին չորս ավիո-ջոկատ, վորոնցից յուրաքանչյուրը բաղկացած եր 12 այերոպլանից, բայց հենց պատերազմի ըսկըզբին նրանք համոզվեցին, թե ինչքան խոշոր նշանակություն ե ունենալու ոդային նավատորմը։

Համաձայն յեղած տվյալների ավիացիայի կառուցումն ու

կազմակերպումը գնում էր հաջող ընթացքով, վորն յերեսում է հետևյալ թվերից։

1917 թ. կառուցված է 5.496 այերոսլան

1918 թ. » 11.091 »

Իսկ պատերազմի վերջին Անգլիան ընդամենը ուներ 203 ավիո-ջոկատ՝ 22,171 ոդանավով։

Անգլիայի ոդային նավատորմի անձնական կազմը հասել էր 350.000 հոգու։

Անգլիան իր ոդային նավատորմին հատուկ ուշագրություն գարձնում է մասնավանդ վերջին յերկու տարվա ընթացքում։

Նրա ուշագրությունը գլխավորապես ավիո-արդյունաբերության ուժեղացման վրա և կենարունացած, զարգացված ու լայնացված և ավիո-լաբարատորիաների ու գլոբոցների ցանցը։

Մինչդեռ պատերազմից հետո, մինչև 1922 թ. Անգլիան կրծառում էր ավելի և մոտորային գործարանների թիվը, այժմ նա հակառակ քաղաքականություն և վագում։

1922—23 թ. թ. կատարած բազմաթիվ փորձերը նորից ու արդեն վերջնականապես համոզեցին Անգլիային ոդային նավատորմի ռազմական խոշոր նշանակության մեջ և ստիպեցին նրան իր քաղաքականության գլխավոր հենարանը ծովային նավատորմիդից ոդային նավատորմի մեջ վորոնել։

Ներկայումս Անգլիան միակ պետությունն է, վորի ոդային ուժերն ինքնուրույն կազմակերպություն ունին և յենթակա յեն ոդային ուժերի նախարարության։

Ոդային նավատորմի մեջ նա տեսնում է այն ուժեղ միջոցը, վորն ամենից լավ կարող և պաշտպանել նրա յերկրի յերկաթուղարձերը, պետական հիմնարկություններն ու գործարանները հակառակորդի ոդային ուժերից։ Իր ծովային ուժերն ևս Անգլիան ոդային նավատորմի միջոցով է պաշտպանում։ Այդ նավատակի համար է, վոր այս տարի ձեռնարկվել է Սինգապուր ծովային անոելի բազային կից ոդային ուժերի կազմակերպումը։ Անգլիական կառավարությունը ձգտում է ոդային ուժերով ապահովել իր իմպերիալիստական տիրապե-

տությունը գաղութների վրա, Վերջին տարիների ընթացքում զանազան իր գաղութներում ողային ուժերի միջոցով արդեն խեղղել ե մի շարք ապստամբություններ, վորոնց ժամանակ ռազմական մի քանի ողանակեր կարողացել են փոխարինել պատժիչ դրամակին և Անգլիայի վրա անհամեմատ քիչ ժախը են նստել:

Անգլիայի առաջին տարիների ծրագրի մեջ մտնում ե ծովային ուժերը համապատասխան քանակով ողանակեր մատակարարելը:

Անգլիան ավտո-արդյունաբերությունը ներկայումս դրամած ե բավական լավ հիմքերի վրա և նրանց արտադրած ողանակերը վորակապես կարելի յէ բավարար համարել:

Անգլիան իր միջազգային դիրքի համեմատ մյուս պետություններից ավելի թույլ ողային նավատորմ ունի, վորի զարգացման խնդրով ներկայումս խիստ մտահոգված է:

Մի կողմից Անգլիան աշխատում ե մոտ ապազյում զոնե հավասարվել ֆրանսիային, վորի ողային ուժերը զրեթե տասն և հինգ անգամ ավելի ուժեղ են քան Անգլիայինը, մյուս կողմից ել աշխատում ե մրցել Ամերիկայի հետ ողային նավատորմի վորակի բարձրացման տեսակետից:

Անգլիան առանձնապես հոգ ե տանում վոչ միայն ավտո-արդյունաբերության բարձրացման համար, այլև կառուցում ե բազմաթիվ ավտո-կայաններ և ավելացնում ե մասնագետների թիվը: 1924 - 25 թ. թ. ընթացքում նաև ծրագրում ե իր ուղամական ողային նավատորմի անձնական կազմը 33,000-ից հասցնել 35,000-ի մինչ գեռ նրա ամբողջ տերրիտորիալ բանակի թիվը հավասար ե 152,592:

Քաղաքացիական ողային նավատորմը բավական թույլ զարգացում ունի և սակայն պետքերի համար առանձին ծառայություններ մատուցանել չել կարող:

Վերջին ժամանակներս Ամերիկայի որինակով Անգլիան հսկագած ե խոշոր դիրիժարներ կառուցելու խնդրով: Մեր ունեցած տեղեկությունների համաձայն նաև արդեն ձեռնարկել ե Ցեպելինի սիստեմի մի անոելի դիրիժարի կառուցում, վորը

կավարտվի մոտ յերկու տարվա ընթացքում: Վերջինս լինելու յէ ներկայած յեղած դիրիժարներից ամենամեծը: Ըստ յերեւվույթին մեր ունեցած տեղեկությունները լրիվ չեն, և ինչպես յերեւմ ե, Անգլիան կառուցում ե մի քանի դիրիժարներ իրք թե քաղաքացիական ողային նավատորմի համար, բայց կասկած չունենք, վոր այդ պաշտոնական տեղեկությունները միայն նրա համար են, վոր առիթ չտան մյուս պետություններին այդ դիրիժարները ուսպանավեր համարելու:

Յ Ա Պ Ո Ն Ի Ա

Յապոնիայում ողային նավատորմն սկսեց ավելի ուշ զարգանալ, միայն 1917 թ. այստեղ նկատվում ե վորոշ հետաքրքրություն դեպի ավիացիան, և ավտո-արդյունաբերությունը կազմակերպելու նպատակով յապոնացիք 1917 թ. Գերմանիայից հրավիրեցին 60 մասնակիտներ, վորոնք իրենց աշխատանքները շարունակեցին մինչև 1922 թ.: Այդ աշխատանքները խոշոր դրական արդյունքներ տվին Յապոնիայի ողային նավատորմի կազմակերպման ու զարգացման գործում: Այս աշխատանքների հետևանքով Յապոնիան 1922 թ. կարողացավ մոտ 10 ավիոգործարան հիմնել վորոնք առաջին շրջանում արտադրում ելին յեկրոպական տիպի ողանակեր:

Հետազոտում յերբ ավիացիայի գործը Յապոնիայում լայնացավ ու զարգացավ, արտադրվեցին յապոնական ձերի ողանակեր:

Յերրորական տեղեկությունների համաձայն նաև վերջին տարիների ընթացքում իր ողային նավատորմը զարգացնելու վրա ծախսել ե՝

1918 թ.	1,540,000 իյեն (1 իյեն=1 ռուբ.)
1920 թ.	6,200,000 » (միայն սակայն ողանակի կարիքների համար)

1922 թ.	8,700,000 »
1923 թ.	2,500,000 »
ինչ 1924 թ. բյուջեյով հատկացված ե յեղել ողային նավատորմի կարիքների համար 80,000,000 իյեն:	

Նույն թվին Յապոնիայի ողային նավատորմը կազմված եր 500 այերոպլանից իսկ անձնական կազմը՝ 4,000 հոգուց:

Յապոնացիք վերջին շրջանում լուրջ ուշադրության առարկա յեն դարձրել ծովային նավատորմիդը այերոպլաններով ավանդություն խնդիրը: Բացի այն, վոր նրանք ունեն այերոպլաններին հարմարեցրած մի քանի ծովային ռազմանավեր, վորոշել են 1925 թ. ծովային նավատորմի ողային ուժերն ավելացնել 200 նոր այերոպլաններով:

Բացի մեր հիշած պետություններից ողային նավատորմի ուժեղ զարգացման խնդրով զբաղված են նաև մյուս մասն ու խոշոր պետությունները, վորոնք իրենց բյուջեների մյուս ծախսերը կրծատում են նորուառ ողային նավատորմի, չհաշվելով այն հատուկ գումարները, վոր հատկացվում են ողային նավատորմի զարգացմանը:

Զանազան յերկրների ողային նավատորմի զարգացման իսկական պատկերը տալ դժվար է, վորովհետև դա ուղմական խիստ զաղանիք է, բայց կասկածից վեր է, վոր այդ յերկրներում ևս ավիացիայի զարգուցումը նորանոր նվաճումներ ե կատարել: Կարծում ենք, վոր մեր բերած մի քանի թվական տվյալները ևս վորոշակի ապացուցում են այն խոշոր նշանակությունը, վոր իր գոյության ամենակարճ ժամանակի ընթացքում ձեռք ե բերել ողային նավատորմը:

Ո Դ Ա Յ Ի Ն Ա Վ Ա Տ Ա Ր Մ Ը ԽՈՇՀՐԴԱՅԻՆ ՅԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Ողային նավատորմի կարիքը ամենից շատ զգում է Խորհրդային իշխանությունը: Ողային նավատորմը հոկտեմբերյան Հեղափոխության նվաճումները ներքին և արտաքին թշնամիներից պահպանելու համար ամենալավ գննին է:

Դասակարգային կովի ասպարիզում ողային նավատորմը պրոլետարիատի շահերի լավագույն պաշտպանը կարող է լինել:

Ավիացիայի զարգափարը Ռուսաստանում նույնքան հին է, վորքան Յերկրություն:

Բայց այնուամենայնիվ չորհիվ յերկրի տնտեսական-կույլառական ընդհանուր հետամնացության, նրա զարգացումը շատ դանդաղ է կատարվել:

Դրա ամենաաչքի ընկնող փաստն այն է, վոր այնպիսի մի մեծ պետություն ինչպիսին եր ցարական Ռուսաստանը, չուներ վոչ մի ավիո-գործարան: Ահա այս պատճառով ել իր ավիացիայի արտադրության ու կազմակերպման գործում կախումն ուներ արտասահմանից, գլխավորապես Անգլիայից ու Ֆրանսիայից, վորոնք ել մինչև պատերազմի վերջը նրան ողանավեր ելին մատակարարում:

Ավիացիայի սկիզբը Ռուսաստանում կարելի յե համարել 1907 թ. մինչև 1914 թիվը, վորը մյուս բազմաթիվ յերկրների նման (բացի Ֆրանսիայից ու Գերմանիայից) ֆորձերի և մրցումների շրջան է յեղել: Այդ շրջանումն է, վոր Ռուսաստանում յերեան յեկան մի շարք հոչակավոր կոնստրուկտորներ ու մասնագետներ, վորոնց թվումն եյին պրոֆ. Փուկովսկին, ողաչու Նեստորովը, վորոնց թվումն Սիկորսկին և ուրիշները, վորոնք մի շարք գումարով մեծ չափով նպաստեցին ողային նավատորմի բարգավաճման գործին:

Բավական է ասել, վոր առաջին մեծ ծանրություն վերցնող ողանավը կառուցված է յեղել Ռուսաստանում դեռ պատերազմից առաջ: Դա կոնստրուկտոր Սիկորսկու հայտնի «Էլյա Մուրումեց» ողանավը եր, վոր վերցնում եր 11 մարդ, մինչդեռ այն ժամանակվա արտասահմանյան ամենալավ ողանավերը չելին կարողանում յերկու մարդուց ավել վերցնել:

Ավիացիայի ասպարիզում բազմաթիվ գյուտեր արեց հայտնի պրոֆ. Փուկովսկին, վորի աշխատանքները մինչ որս ել ունեն գիտական խոշոր արժեք ու հիմք են ծառայում ավիացիայի թերթիայի համար:

Ողաչու Նեստորովը եր, վոր ի զարմանս ամբողջ աշխարհի առաջին անգամ իրագործեց այսպես կոչված «մահվան ողակ» (մերտեա ուժա) թոփչը, վոր մինչև հիմա ել համարվում է ամենաղժվար թոփչը և շատ քիչ ողաչուների յե մատչելի:

Մեր բերած այս փաստերը կազմում են գրեթե մի կաթիւը ուսուական բազմաթիվ գյուտերի:

Ցարական Ռուսաստանի իր ժամանակին չկարողացավ ողակի այդ գյուտերով ու բարելավումներով, մինչդեռ արտասահ-

մանում լոյն չափերով ոգտվեցին նրանցից ու մինչև այժմ եղարտմակում են ոգտվել:

Միայն խորհրդային իշխանությունն եր, վոր իր տիրապետության հենց առաջին արձանից լուրջ ուշադրություն դարձրեց ողային նախատորմի կազմակերպման ու արդյունաբերության զարգացման վրա:

Խորհրդային իշխանության հոգատար վերաբերմունքի ջնորդիվ եր, վոր մի քանի տարվա խաղաղ շինարարական աշխատանքների ընթացքում հստակվոր դարձավ բավարար չափով ստեղծել ու զարգացնել ավելարդյունաբերությունը միության մեջ:

Ներկայումս մեր միության մեջ արգեն կան մի քանի ավելարդարաններ, փորակ կառուցվում են ոգանակեր:

Այս դործի կազմակերպման ժամանակ Խորհրդային իշխանությունը ամենամեծ դժվարության հանդիպեց մոտորների արտադրության գործում, վորի կարգավորումը միայն 1924 թ. վերջին հաջողվեց:

Ներկայումս խորհրդային ավելարդարաններն արգեն արտադրում են ավելարդության կամք իրենց փորակով զրեթե չեն զիջում ժամանակակից արտասահմանյան մոտորներին ու անհամեմատ եժան են նստում, քան այնտեղ ձեռք բերածները:

Վերջին տարիներում խորհրդային ավելարդյունաբերության արած առաջադիմությունների և մեր կարմիր ողաշուների պատրաստականության ամենալավ ապացույցները 1924—25 թ. ընթացքում կատարած մի շարք հաջող ու խոշոր թոփշքներն ինչպես են՝ Բագութեհրան, Հինգիկուշի և խորհրդային տերթիսորիայի վրա կատարածները:

Նրանցից ամենանշանավորն է խորհրդային ողանակերով և ոգաշուներով ձեռնարկած Մոսկվա-Պեկին (Չինաստան) մեծ թոփքը:

Այս թոփքի դիր առաջածությունը՝ մոտ 7,000 կիոմ. է, վորի մեծ մասն անցնում է չափազանց վտանգավոր վայրերով. այդ դիր վտանգավոր մասերն են՝ Նովոնիկուտսկ—Իրկուտսկ (Սիբիր) 1,614 կիոմ., վորից 1000 կիոմետրը անցնում է անբնակելի և չուսումնավորված վայրերով (առյուններով).

ամբողջ տարածության վրա չկա վոչ մի ավիո-կայան ու իշնելլ վտանգավոր է՝ Իրկուտսկ-Վերին Ուգենսկ 241 կիոմետր և, վորն անցնում է Բայկալյան լեռների և լճի վրայով, ուր իջնելլու հստագործություն բնավ չկա հարթ հրապարակներ չլինելու պատճառով։ Վերին Ուգենսկից հետո մինչև Ուլանբատոր (մեր սահմաններից դուրս) զրեթե ամբողջ տարածությունը 3000-ից մինչև 7,000 մետր բարձրություն ունեցող լեռներ են։ Ուլանբատորից մինչև Կարգան 1160 կիոմետր է, այս տարածությունը ամբողջ զծի ամենավտանգավոր մասն է կազմում. այդ զծի մաս 1000 կիոմետրը անցնում է Գորի աշապատի վրայով, վորաեղ նույնպես բարձր լեռներ ու խոր ավազումներ կան։ Այսաեղ տաքության աստիճանը 40° ավելի է և զրեթե միշտ վհում են ուժեղ քամիներ, վորոնք կարող են այերուպլանը խաղալիք դարձնել։

Անապատում հարկադրված իջնելլ չափազանց վտանգավոր և համարվում լիջնելլու աեղ չլինելլու պատճառով։

Մոսկվա-Պեկին թոփչքին մասնակցում են 6 այերոպլան, վորոնցից 4-ը ամբողջովին խորհրդային գործարաններից են արտադրված, ողաչուները բոլորն ել կարմիր Ողուին նախատորմի կազմից են։

Թոփչքը սկսվել է սույն 1925 թ. հունիսի 10-ի առավոտյան ժամը 8-ին Մոսկվայի ընկ. Տրոցկու անվան ավիո-կայանից։

Համաշխարհային մաշտաբով մինչև այժմու տեղի ունեցած խոշոր թոփչքներից Մոսկվա-Պեկին թոփչքը պիտի համարել ամենաղեղաքար և վտանգավորը՝ անցնելիք տարածության տեսակետից, մասնավանդ վոր թոփչքը կազմակերպված է շատ կարճ ժամանակում և զիջը պատրաստված չի։ Մինչդեռ արտասահմանում նման թոփչքներ կատարելիս յերկար ժամանակ նախապատրաստական աշխատանքներ են կատարում։

Բացի այն, վոր այդ թոփչքը ամենալավ տեխնիքական քըննությունն է մեր յերիտասարդ ավելարդյունաբերության և մեր ողաչուների պատրաստականության ու կայունության, նա ունի և քաղաքական նշանակություն։ Մոսկվա-Պեկին թը-

ուիշքն ողային գծով կապում ե յերկու խոշոր պետություններ՝ Խորհրդային Միությունը Զինաստանի հետ։ Նա սերտ յեղբայրական կապ ե ստեղծելու մեր բանվորների և գյուղացիների ու չինական ժողովրդի միջև։ Թոփիշքն ունի և վորոշ զիտական նշանակություն, անցնելիք վայրերի և ողի ուսումնասիրության տեսակետից։

Թոփիշքը ձեռնարկված ե ավիո-քիմի (ՈՆԲԸ և Դոբրոքիմիացյալ ընկերություն) ու Դոբրոլյոտ ակցիոներական ընկերության կողմից։ Մոսկվա—Պեկին թոփիշքին հետեւում են վոչ միայն մեր Միությունը, այլև ամբողջ աշխարհը։

Առանձին ուշադրությամբ այդ թոփիշքին հետեւում ե համաշխարհային բուրժուազիան, վորի ձեռքից մեր աշխատավորությունը խրում ե նաև ուղմատեխնիկան, վորի ուժեղագույն ճյուղն ե կազմում Ողային Նավատորմը։

Այսպիսով կարմիր ողային նավատորմը հետզհետեւ միանգամայն ու վերջնականապես ազատվում ե արտասահմանից կախում ունենալուց։

Բայց այդ բավական չե, մեր ողային նավատորմի զարգացման համար գեռևս շատ անելիքներ կան, վորով միայն նա կհասնի իր իսկական կոչմանը։

Ողային նավատորմն ուժեղացնելու համար անհրաժեշտ են զլիսավորապես յերկու պայման՝ 1) ավիո-արդյունաբերության ստեղծում, 2) մասնագետների կազմի ստեղծում։

Այս յերկու հիմնական խնդիրների լուծումն արդեն նիշել ե խորհրդային իշխանությունը և անցել նրա իրագործմանը։

Վորքան խոշոր ե ողային նավատորմի գերը, այնքան ավելի դժվար ե նրա կազմակերպումը, վորի համար Խորհրդային Իշխանությունը ոգնության ե կանչել մեր յերկրի բոլոր աշխատավորությանը։ Վերջնիս ոգնությունը բնականաբար լինելու յերբոյապես ու վորոշ չափով նյութապես։

Աշխատավորության բարոյական ոգնությունը նրա մեջ ե լինելու, վոր լավ ըմբռնելով ողային նավատորմի ուղմական ու կուլտուրական խոշոր նշանակությունը, իր գոյության և դա-

սակարգային շահերի պաշտպանության տեսակետից անհրաժեշտ հետաքրքրություն հայտնաբերի գեպի ողային նավատորմի կազմակերպման հարցը և նրա զարգացման գեկը պահի իր ձեռքում։

Աշխատավորության ասելիքներից ամենաառաջինն այն ե, վոր իր շարքերից ողային նավատորմին անհրաժեշտ մասնագետներ տա։

Վորովինետև ողային նավատորմը հանդիսանում ե քաղաքական ուժեղ գենքերից մեկը, բնական ե, վոր նրա անմիջական դեկավարությունը պետք ե լինի պրոլետարիոտի ձեռքում։

Նույն տեսակետի վրա յեն կանգնած և բուրժուական յերկները, վորոնց մասնագետներն ու մանավանդ ողաչուները բացառապես բուրժուական խավերից են լինում։ Նրանք ավիացիայի գործը յերբեք չեն վստահանում բանվորներին՝ համոզված լինելով, վոր վերջինները այդ գենքը կարող են ուղղել հենց իրենց գեմ։

Ահա այս նպատակների համար ե, վոր Խորհրդային Իշխանությունը կյանքի յե կոչել Ողային Նավատորմի Բարեկամների Ընկերությունը, վորն իր շարքերում համախմբում և աշխատավորության լայն մասսաներին ավիացիայի կազմակերպան աշխատանքները հաջողությամբ առաջ տանելու համար։ Այդ ընկերությունը, վոր կը առաջ կոչ վում ե ՈՆԲԸ, հիմնվել է 1923 թ. մարտին Մոսկվայում, միջազգային գոխնարաբերությունների մի փոթորկալից ըլանում, յերբ Սնգլիարի արտաքին գործերի մինստր՝ լորդ Քերգոնը Խորհրդային Միության ուղարկեց իր հայտնի վերջնագիրը (ուղարկմատում)։

ՈՆԲԸ գլախավոր նշանակությունը նրա մեջ ե, վոր կարմիր ողային նավատորմի արագ զարգացումն ու ուժեղացումը կապում ե աշխատավոր լայն մասսաների գործոն ու կոլեկտիվ մասնակցության հետ։

Այն ժամանակ, յերբ բուրժուական ողային նավատորմը միայն անհատի առաջ ե գործունեյության ասպարեզ բաց անում ՈՆԲԸ մասսայականացնելով ավիացիայի գաղափարն, ընդհակառակն ասպարեզ ե բաց անում կոլեկտիվ ստեղծագործության համար, վորի արդյունքներն անկասկած ավելի խոշոր ու արդյունավետ են, քան առաջին դեպքում։

Այստեղ կա մի ուրիշ դրական յերկույթ ևս։ Այդ այս է, վոր ՈՆԲԸ հանդեռ և բերում բանվորի ու գյուղացու առողջ ստեղծագործական ընդունակությունները, վորոնք, անկառած, ավելի բարձր ու արդյունավետ են, քան բուրժուական տարրերինը։

ՈՆԲԸ ավիացիայի գաղափարը մասսայականացնելու համար բացի գասախոսություններից ու բանվորական կոլեկտիվներում արած զեկուցումներից (ոդային նավատորմի նշանակության մասին) կազմակերպում ե գործնական աշխատանքների ավիո-գաղափացներ, ավիո-անկյուններ, սավառնակային ու մոդելային խմբակներ։

Խմբակներն ու ավիո-գաղափացներն իրենց շուրջն են համախմբում աշխատավոր մասսաների ընդունակ ու յերիտասարդ տարրերին և ծանոթացնում ավիացիայի և ոդագնացության սկզբնական տարրական գիտելիքների հետ։

ՈՆԲԸ սկզբնական ծանոթություն տալուց հետո ավելի ընդունակներին ուղարկում ե մասնագիտական բարձրագույն դրագույնները, վորտեղ ավարտելուց հետո նրանք դառնում են կարմիր ոդային նավատորմի պիտանի ու հարազատ ղեկավարներ։

Նյութական ասպարիզում ՈՆԲԸ ցույց ե տալիս վորոշ ոժանդակություն մեր ավիո-արդյունաբերությանը, ավիո-դպրոցներին, լաբարտորիաներին, ավիո-ջոկատներին և այլն։

Բացի այդ ՈՆԲԸ մինչեւ այժմ հավաքած զումարներից հնարավորություն ե ունեցել զննելու մեծաքանակ ոդանավեր, վորոնք հանձնված են ուղամական կարմիր ոդային նավատորմին։

Մինչեւ այժմ ՈՆԲԸ իր կատարած աշխատանքներով արդարացրել ե իր առջադրված լոգունդը՝ «Աշխատավար, կառուցիր քո ոդային նավատորմը»։

ՈՆԲԸ Հայաստանում (ՀՈՄԲԸ) կաղմակերպել ե 1923 թ. ոգոստոսին և իր մոտ յերկու տարվա վոյության ընթացքում կարողացել ե ստեղծել Խորհրդային Հայաստանի բոլոր գաղափառներում իր բաժանմունքները և կոլեկտիվորեն կաղմակերպել բջիջներ ու մի շարք ավիո-անկյուններ այդ բջիջնե-

րին կից, կազմակերպել ե մոդելային խմբակներ, վորտեղ յերիտասարդությունը անմիջականորեն ու գործնական աշխատանքի փոքրեր և անում ու ծանոթանում ավիացիայի հետ։ Ներկայում չՈՄԲԸ զբաղված ե ավիո-գաղափացներ բացելու և սավառնակային խմբակներ կազմակերպելու գործով, վորով կը դրվի և. Հայաստանում ավիո-կույլտուրայի հիմքը։

Ոգային նավատորմի գաղափարը մասսայականացնելու համար ՀՈՄԲԸ զրավոր և բանավոր ազիտացիա յե արել։

Ներկայում չՈՄԲԸ անդամների թիվը 15.000-ից անցնում է, չնայած վոր մինչեւ հիմա գրեթե բացառապես քաղաքներում ե աշխատանք կատարված ու միայն այժմ ե աշխատանքը ծավալվում նաև դեպի գյուղ։

Բնականաբար Խորհրդային իշխանությունը չի կարող բավարարվել ՈՄԲԸ տարած աշխատանքներով, նա ինչպես շահագրգուված ոդային նավատորմի զարդացման խնդրով ու ննարագորության սահմաններում պետական միջոցներով բաց ե անում նոր դպրոցներ, գործարաններ և լաբարտորիաներ, առաջնացնում ե յեղածների ծավալը, բարձրացնում նրանց վորակը։

Խորհրդային յերկրների պրոլետարիատը պետք ե ամենայն յեռանդով աջակցե իր պետությանը վորպեսզի հնարավոր լինի կարմիր ոդային նավատորմը կարճ ժամանակում այնպիսի զարգացման հասցնել, վոր նա ի վիճակի լինի պրոլետարիատի գիկտատուրան պաշտպանել ամեն մի իմպերիալիստական հարձակումներից նաև ողում։



«Ազգային գրադարան



NL0291189

14.566



ԳԻՆՆ Ե 50 ԿՈՊ.